



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

23799

84-3  
4-42

2011

№ 2003



ՔԵՐԹՈՒԱԾՔ

ՆՈՒՒՐԱԿԱՆՔ



84-3  
Վ. 42  
ԱՂԷՔՍԱՆԴՐ ՎԷՅ

23

ՔԵՐԹՈՒԱԾ Ք  
ՆՈՒԻՐԱԿԱՆՔ

MISMORIMES



ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՄԵԼԻՈՆ Կ. ՆԱԶԻԿԵԱՆ

Printed in Turkey


ԳԱՎԱՑԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Կ. ՊՕԼԻՍ

ԳԱՎԱՑԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

1875



701

ԱՌ

ԱԶՆՈՒԱԶԱՐՄ

Վ.Ս.ՋԱՆԻԱՆԻ ՄԷՑ

ԱՄԵՆԱՍԻՐԵԼԻ ՈՐԴԻ

ՄԵՇ. ՄԻԿԱՅԷԼ ԷՖԷՆՏԻ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ


ՆՈՒԷՐ

Քեզ նուշիրեմ, ո՛վ Վահանիկ,  
Ըզ մատենիկս այս օգտաշէտ,  
Իբր ըզ գոհար մարգարտիկ,  
Տայ յիշատակ անուանոյ յաշէտ :

Մ. Ն.



358  
39 Գ






Սիրելի Ազգիս ծառայութիւն մ'ընելու և ասպազային  
առջև աննշան չը մնալու համար սոյն Գրգիս թարգմանու-  
թեան ձեռն արկի :

Եթէ ընթերցողն մտամիտի ընթեռնու զայս, կը  
յուսամ որ անօգուտ չըլլայ :

Մ. Կ. Ն.





## ՅԱՌԱՋԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Այս Գիրքը մարդուս եւ Աստուծոյ մէջ եղած ճշմարտութեան հետազոտութեան համար խղճմըտանքաւոր եւ պարկեշտ հոգւոյ մը հոսմունքը կը պարունակէ :

Այս ակամայ հոտումներն , որ սանկ ըսենք՝ կրաւորական ետութենէն , ներգործական ետութիւնը կը քաղէ , եւ որ բանավարութիւն , խորհրդածութիւն կը կոչուի , նախայղացեալ դրութեան մը համեմատ ի մի խմբուած չեն . փիլիսոփայական աստիճանաւորութեան կարգաւ մը իրարու չ'են հետեւիր :

Մտքին տառ ընծայելով ամենեւին զիտաւորութիւնս գիրք մը շինել չ'էր :

Հոգիս երկար ատենէ ի վեր ինքնիր վրայ ամփոփուելով միամիճակ խօսակցելու եւ իւր էութեան նպատակը որոնելու անդիմադրելի պէտքը զգաց :

Արդ՝ երբ հոգին ինքնիրեն խօսի , միշտ ստեղծողին հետ քիչ կամ շատ խօսակցած կըլլայ :

Այս էակաց էակին հետ եղած խօսակցութիւններն վերջապէս զիս սքանչեցուցին :

Եւ որովհետեւ անոնք անկեղծ , յանպատրաստից են , եւ վասն զի նոքա կենաց այլ եւ այլ ժամերու եւ ժամանակներու մէջ զիս շրջապատած են , նոքա կը պարտին փրկաւէտ ազդեցու-



Թիւն մը ներգործել այն ամեն բանաստեղծական հոգւոց վրայ, որք կը սիրեն իրենց բանավարութեան լուսոյն մէջ ցոլանալ:

Ընթերցողին հաւատքը ինչ որ ալ ըլլայ՝ հերիք է որ այդ հաւատքը անձնասիրութեամբ արատաւորեալ չ'ըլլայ, այլ սիրոյ եւ ոչ ատելութեան դուստր. եթէ ոչ միշտ, գոնէ ժամանակ ժամանակ անհունութեան բարձրութեանց մէջ խոյանալու, իսկական կենաց թշուառութիւններէն վեր, նկատողական շրջանակի մը մէջ սլանալու համար յենակէտ մը:

Որչափ զօրաւոր ալ ըլլայ փիլիսոփայն, որ իւր մէթոտը հաւաքարանութեամբ եւ եղբակացութեամբ ուղղէ կամ տարածէ, պիտի գտնայ նշանի եւ հանդստեան կէտեր չափելու համար սյն ճամբան՝ ուրկէ իւր խորհուրդը ընթացած է եւ կամ պիտի ընթանայ:

Փնտռեցի, մտածեցի, աւելի բարձր խորհեցայ, տեսնել կարծեցի, Բայց Բան մը չը հասարկեցի:

Կնձմէ աւելի զօրաւոր, աւելի երջանիկ, իւր հաստատութեանցը ապահով ընթերցողը, թող ներէ իմ տարակուսանացս, վշտացս եւ մինչեւ իսկ քաղցրութեանցս:

Այս որոնմանց, այս հոգւոյ պեղմանց, այս Արարչին հետ ունեցած խօսակցութեանցս մէջ գաղափարային հեշտական կեանք մը գտած եմ:

Խորհուրդս՝ իւր թոխիչին մէջ բաւական բարձրերը սլացած է. բայց բան մը չ'եմ հաստատեր, բան մը չ'եմ ստիպեր իբրեւ պարտք. մէկու մը խղճմտանքը չ'եմ վրդովեր:

Հոգւոյս, բանավարութեանս եւ Աստուծոյ բողոքախօսը պտոյտ մը ըրի:

Նոր աշխարհ մը գտայ:

Ես կը տարակուսիմ ատոր:

Բայց կը հրաւիրեմ իմ դուզնաքեայ ընթերցողներս նոյն պտոյտն ընելու:

Իմ գծած ալօսներէս օգուտ պիտի քաղեն, թերեւս շատ հոգեկան նորութիւններ պիտի գըտնեն որ ինէ խուսափած ըլլան:

Կարելի է որ իմ հաւատացածս սուտեղած ըլլայ:

Բայց եւ այնպէս ատով ալ պիտի բաւականանան:

Կարելի է նոյնպէս թէ այս մէկ քանի տարուան ընթացքին մէջ աշխարհիս մէջ ճշմարտութեան մը գաղափարներն ստանամ, ոչ թէ նոր, այլ մայր ճշմարտութեան քաջակորով աղջիկը:

Ձեզ ուրեմն անկ է, իմ ընտրեալ ընթերցողներս, որումը բարի ցորենէն զպտել:

Իսկ ես մարդագետին մ'եմ որոյ վերայ ուղտափուշը բուսած է ֆլէ-վին քով եւ մոլեխինդը ծոթրինին քով:

Ձեմ կրնար հոգիս քաղահան ընել առանց զայն ջնջելու:

Ես հաստատական ձեւ մը առած եմ այն կեղծ խորհողներուն դէմ, որ փիլիսոփայութիւնը իբրեւ նկարչութիւն կը գործածեն:

Յետոյ բանավարութեան կեղծիչներուն դէմ, որ աստուածային ներշնչութիւնը իրենց համար առանձնաշնորհման եւ ուրիշներուն համար արտաքսման գործի կ'ընեն:



Այս դայլահովիտներն, որ սապէս կոռնան .

« Մեք միայն բացարձակ իշխանութեան տէր եմք, բացի մենէ եւ մեր բարեկամներէն մէկու մը համար փրկութիւն չը կայ » :

Ո՛չ միայն հանդերձեալ աշխարհի մէջ, (մարդ կրնայ անոր վրայ զմայլել, գոնէ միայն իրենց ընկերութեան մէջ գտնուելով) այլ այս աշխարհիս մէջ, որոյ կը յուսան իրենց բռնութեամբը տիրել, եւ իրենց նիւթական ու չէ թէ հոգեւոր շահուց համար ի կիր արկանել :

Այս բանավարութեան անարդողաց հակառակ հաստատական ձեւ մ'առի, ո՛չ թէ ատելութեամբ, այլ որովհետեւ կուզէի զանոնք սիրել եւ չ'եմ կրնար :

Նա՛ որ օրը տեսած է, կրնայ բացարձակապէս գիշերուան մթութիւնը հրատարակել :

Նա՛ որ սիրով կը յորդի, կրնայ մի եւ նոյն պայմանու դատապարտել իրեն ատելի եղածները :

Նա՛ որ ամենուն բարիքը կ'ուզէ յանուն բանավարութեան, կրնայ առանց խաբուելու վրտանդի, յիմարութեան վրայ յարձակիլ որ կուզէ մէկ քանիին չարիքը :

Մի՞տօր (miser) ըստ նախնի լեզուաց նուիրական քերթուած ըսել է. մի՞տօրի՞մ (miserimes) ալ ասոր յօքնակին է :

Ահաւաստիկ սոյն տիտղոսն ընտրելուս պատճառը :

Եթէ իրաւ է որ մարդուս գերագոյն նպատակը տիրով նմանիլ է, ամեն է եղող բաներուն մէջ

ճառագայթ արձակելով, ասոր միայն կրնայ հասնիլ մարդս իւր ետութեան ճառագայթները սրիւռելով, կամ սանկ ըսենք մարդկութեան մէջ լուծուելով :

Միակ այս միջոցով մարդկային հոգին ժամանակն ու միջոցը ջնջելով, մտաւորական աշխարհի որ էր առաջ, այրելով պիտի ըլլայ աշխարհայն բոցակիզեալ կեդրոնին մէջ ուրկէ բոլոր լոյսերը կը բղխին :

Այս գիրքը դրած ատենս ուրիշ նպատակ չ'եմ ունեցած :

Տիտղոսն ողորմութիւն խնդրելու ատեն — իրեն պէս պիտի ընէի քան թէ խորհուրդս եւ արհեստս պղծէի — կըսէր .

« Եթէ դուք ողորմութիւն տուած չ'էք ինձ մէ սկսեցէք :

« Եթէ ըրած էք զայն, ահաւաստիկ հոս եմ դարձեալ զայն տուէք » :

Ես ալ պիտի ըսեմ ընթերցողին .

« Եթէ կենաց գերագոյն նպատակին չ'ես խորհած, սկսէ ինձմէ :

« Եթէ խորհած ես՝ ահաւաստիկ գիրք մը զայն շարունակելու » :



## Կ Ա Ն Խ Ա Բ Ա Ն

Մարդկային սաղմին առաջին խորշին մէջ, Ագարիէք  
աստուածային ցօղէն կաթիլ մը կը դնէ որ հոգւոյ առա-  
ջին սերմն է :

Այս ճառագայթը իւր նշոյլը, իր ձեւը և աստարեզն  
մարմնոյն փոխ կը տայ :

Մարմնոյն երկրային կեանքը մօր արգանդին մէջ իւր  
աճումն է :

Եթէ նա անկէ դատուի, կը մեռնի յաղատութիւն և  
ի լոյս վերածնելու համար :

Ապրիլը մարմնոյ դրախտն է :

Հողին այս կենաց համար ծնած ատեն երկրին ճոցը  
կը մտնէ :

Իւր աճման ատեն կէս մը գիտակից և կէս մը ան-  
գիտակից է :

Քանի որ մարմինը յառաջանայ, հողին կը մեծնայ,  
և դէպի իւր ծնունդը, իւր աղատութիւնը կը քայլէ :

Գեռ մէկ քանի ժամէն և նա ամբողջապէս ինքնին  
տիրուհի պիտի ըլլայ :

Երբ հողին կցող թեյը մահուամբ խզի, այս հողին  
ի լոյս կը ծնի և իր աղատութեան էութեան մէջ կը մտնէ :

Տէ՛ր, հողիս իւր աճման մտնելէն ՚ի վեր շատ ան-  
զամ շեղած է :

Ատելութեամբ լի, նեղ և մարդեալ հոգւոց հետ հա-  
ղորդակից եղած է :

Այս հոգւոց հետ, որք զքեզ՝ որ անհուն սէրն ես՝  
կրօնական կուսակցութեան մը գլուխ ըրած ես, որպէս  
զի յանուն քո հարստահարեն, բռնաբարեն ամեն անոնք՝  
որ իրենց թշամբները չ'են ատեր. անոնք՝ որ զանոնք



քու բացարձակ, առանձնաշնորհեալ, անընկճելի ներկա-  
յացուցիչքդ չ'են ճանաչեր :

Անոթ՝ որ գքեզ կը փառաւորեն իրենց բանավարու-  
թեամբը, որ մարդիկութեան մեջ քո միակ մարմնա-  
տուր/իւնդ է :

Ինչպէս որ դեռ չը ծած տղան իր մայրը բոլոր մարմ-  
նական հիւանդութիւններէ կը պաշտպանէ, նոյնպէս ըս-  
տեղծչին գաղտնիարականը հոգին սխալանաց հիւանդու-  
թիւններէն կը պաշտպանէ :

Այս գաղափարականին շնորհիւ, հոգիս ուղղուելով  
ուղղակի դէպ առ քեզ վերընձիւղած է :

Հոգի մը գոր դու ի քեզ կապած ես. սիրելու հա-  
մար ստեղծուած այլ ո՛չ ատելու. Ճշմարտութեանը ծա-  
րաւի հոգի մը և քու սքանչելի լուսոյդ թափանցելու տեն-  
չացող :

Այս ազատութեան և աճման օրէն ի վեր լով ի քեզ  
կը թռթռայ. քեզ և մարդկութեան համար որ ուրեշ  
Դու մ'է :

Եւ երբ փորձը ըլլայ, եւ յետ իմ մահուան հոգիս  
ընդդիմահար մարմիններէ աղատի, որ քեզ դէմ առ դէմ  
տեսնել գայն կարգիլին, այն ատեն իւր թխած ձագերը  
կանչող հաւու մը նման ես ալ պիտի կանչեմ իմ երգերս  
որ մտածած եմ :

Դու կրնաս հաւուն պարանոցը ոլորել միայն թէ ձա-  
գերը ապրին :

Հոգիս քեզ համար է Տէ՛ր, ո՛վ որ ալ ըլլաս :

Բայց բանավարութիւնս ու խորհուրդս, մարդուն,  
եղբարցս և մարդկութեան կը վերաբերին :



## Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Մ

### Ա

Քեզ պէս թագաւոր չ'եմ Դաւիթ, իշ-  
խանութեան արբեցնող բաժակէն երբէք չ'եմ  
խմած :

Բայց քեզ նման հովիւ էի, և շատ ան-  
գամ դիշերանց անտառին մէջ երկնից աստ-  
ղերուն հետ խօսեցայ :

Դու, մեծ դիւցանդն, ո՛չ քեզ պէս առիւ-  
ծին կոկորդը պատուեցի, այլ սակայն քեզ  
նման երիտասարդութեան ժամանակս սև  
մարուկներ զսպած և ճերմակ ցուլերու հետ  
խաղացած եմ :

Մեծ քերթո՞ղ, քեզ պէս պարսատիկ գոր-  
ծածած չ'ունիմ, այլ առատ, բարակ ու դան-  
գուր մապեր ունէի քեզ պէս և անտառաց  
արձագանքները իմ երիտասարդական ձայ-  
նիս մեզմ շեշտերը զուարթութեամբ կը կըրկ-  
նէին :



Մեծ գիւթիչ, քեզ պէս իշխանուհւոյ մը սիրոյ համբոյրները ընդ երկար ճաշակած չ'եմ, այլ երբեմն խարտեաշ պատանեկի մը հետ դարնանային առաջին ծաղկանց անուշահոտ ցօղը խմած, որ եկած է քովս նստիլը

Եւ սոխակին երգած վշտերն ու շահօքրամներու և մանուշակաց շատախօսութիւնը լած և նոցա պէս ըրած եմք :

Դաւիթ, իմ նախնիքս, ես ալ քեզ պէս էն կ'երգեմ, արարածոց Արարիչը որ յիս կ'ապրի և ես անոր համար կ'ապրիմ :

Մանկութենէս ի վեր Նորա ձեռնը կեանաց փուշերուն մէջէն քայլերուս առաջնորդած է :

Վերջը իւր աջը աչացս առջև շողացած, և պատերազմներս պատերազմած է :

Երբ մատաղ մարմնոյ մը մէջ փափուկ հօգի մ'ունէի, մայրս որ երբէք մեղք չըգիտեր, ամեն առտու Աստուծոյ աղօթել կ'երթար իրեն արու որդի մը տալու համար, վասն զի աշխարհիս վրայ իրարու ետեւէ երեք աղջիկ միայն ծնաւ :

Աւբանայի կնոջ Աննային պէս ամեն առտու սրտով կ'աղօթէր :

Մի միայն չրթունքները կ'երերային :

Իւր քովիններէն ոչ ոք գիտէր թէ կիտել տը Պիսքէմի ջերմեռանդութիւնը ուսկնց կը դար :

« Աստուած, կ'ըսէր, եթէ ինձ արու որդի մը տաս, քեզ, քեզ միայն զայն պիտի ուխտեմ :

« Գու փառքդ պիտի երգէ, արդարութիւնդ պիտի հրատարակէ, քու հաւատքիդ համար պիտի մեռնի » :

Առտու մը տաճարէն ելնելով գիւղին ալևոր ժողովրդապետին պատահեցաւ :

Իմ մեծ հայրս որ էօլօժ Շընէյտըրի քարտուղարն էր, 1793 ին անոր կեանքը փրկած էր :

— Կիտել տը Պիսքէմ, կ'ըսէր ծերը, ուրբեմն դու ամեն առտու իսրայէլացւոց Աստուծմէն ի՞նչ կ'ուզես :

— Արու որդի մը, պատասխանեց մայրս, որպէսզի կարողանայ յաւիտեանս յաւիտենից զԱնի փառաւորել :

— Ձդէ այդ քու արու տղու մը համար ըրած աղօթքներդ, ի՞նչ բարիք կրնայ ընելու երկրիս վրայ Հրէայ մը աւելի լինելը թըշուառ մը աւելի ըլլալ ըսել է :

Մայրս պատասանեց :



— Տղաս Զատիկ մը պիտի ըլլայ, Բաբբի մը :

— Եթէ խեղացի ըլլայ, եթէ գիտութիւն ստանայ, ես պիտի առնեմ, ըսաւ Ժողովըրդապետը :

— Երէկ գիշեր տեսայ տղաս, վասն զի Եհովան պիտի լսէ աղօթքս . զայս ինծի երազի մը մէջ իմացուց, ըսաւ մայրս :

Տեսայ տղուս հազարաւոր ջահերէ շրջապատուիլը, կուոց ջախջախելն և զանոնք չորս հողմերուն ցրուելը :

Տեսայ նորա Աստուած վառաւորելը, որոյ անունը մէկ, միութիւնը յաւիտենական է և որ յանուն սիրոյ օր մը հանուր երկրիս պիտի իշխէ :

— Կիտէլ, դու կը հայհոյես, ըսաւ Ժողովրդապետը . երբ դու որդի մը ծնանիս իւր թլլիատման ատեններկայ պիտի դանուիմ :

Այն որդին ես եմ :

Թլլիատութեանս օրը ինչան նոր ուխտի, մարմնոյս արիւնը Շիմիթ Ժողովրդապետին սպիտակ վարսիցը վրայ պօռտկաց :

Տէր, դու ես հայրս, մայրս և Ժողովրդապետս . քու վառացի համար մայրս զիս յղացաւ :

Օգնէ՛ ինձ, քու զօրութիւնդ ինձ փոխ տուր :

Կուսակցութեանց որոգայթներուն մէջ մի թողուր որ կյնեմ :

Նոքա իրենց շահուն և իրենց ունայնութեանը համար կ'աշխատին միայն :

Մի թողուր ինձ թափառիլ թշնամեաց դանակաց մէջ :

Ո՛ր ատէ քու զաւկներէդ մին, թշնամիդ է նա :

Թող անունս դարուց մէջ անհետանայ և կամ բարձրանայ, միայն թէ քու վառքի խօսքերուս մէջ թրթռան, այն ատեն ես ապրած պիտի ըլլամ և այն ատեն պիտի կարենամ մեռնիլ :





Տասն երկու տարուան էի :

Ամեն առտու նուիրական լեզուով Դաւթի մէկ սաղմոսը կը կրկնէի, ամեն իրիկունս և մտորակներ ու ճերմակ ցուլեր հովուելու համար անտառը կ'երթայի :

Մինակ չ'էի :

Ուրիշ աստուածապաշտ ինձ հասակակից տղայք կ'ընկերանային ինձ :

Անտառին մէջ ընկերներս գեանախնձոր խորովելու համար թաւուտքի ճիւղերէն կրակ կը վառէին :

Յաւիտենական կենաց աղբիւրէն ինձ նըման ամենեւին խմած չ'էին :

Իրենց մարդարէից խօսքերուն մէջ էն երբէք չ'էին տեսած, նորա անունը չ'էին արտասանած :

Կ'երդնուին, կը կռուէին, կը ստէին և մանաւանդ հրէայները կ'ատէին :

Քանի քանի անգամ զիս կը ծաղրէին, կը նախատէին և իմ ինչքս ինձմէ կը դողնային, զիս կը ծեծէին. ես, Դաւթի թողանը թողը յանուն Յիսուսի որ արժան համարեց միայն նոյն Դաւթի օրդին ծնանիլ :

Էս այն ատեն դողդողալով և աղաչելով քեզ, Տէր, իմ սրտիս ծաւրերուն մէջէն քըրխտոննէիմը կը մօտենայի որ զիս իմ ու քութիւնամեացդ վայրագ ձեռաց մէջը չը ձգես :

Վասն զի ասոնք թշնամեացդ զաւակներն էին, ասոնք ո՛չ քեզ սիրողներուն սէրդ, ո՛չ դժու թիւնդ և ո՛չ արդարութիւնդ կը ճանչնային :

Իրենց բերանը անիծելու համար միայն կը բացուէր. իրենց ոտքը խարդախութեան շաւղաց մէջ յառաջանալու համար կը շարժէին, և իրենց ձեռքը միմիայն զարնելու համար կը բարձրանային :

Ասանց մէջէն երիցս թշուառագոյն հեզաբարոյ և բարի մէկը կար :

Իւր նախանձոտ հայրը նորա մայրը սպաննած էր : Եւ վերջը դահճաց ձեռքը ինկաւ : Նա միայն ինձ դժացեր էր և ինձ օղ-



նութեան կը հասնէր :

Թշուառները բնական եղբայրներ են :

Այն ատեն որ ամբարիշտ ընկերներս կ'ըբօսնուին կանեփոյ ունգեր գողնալու համար դարաններ լարելով, որպէս զի անոնցմէ խարաղաններ հիւսեն կամ թէ այծի մը կաթը խեղճ որբեայրիէ մը գողնան և կամ դեռ ևս հրէայի մը ծառէն պտուղ յափըջ տակեն . ես աստ թագաւորներու ամենէն մեծ քերթող, քերթուլաց ամենէն մեծ թագաւոր Դաւթի նուիրական տուները մըմընջելով անոնցմէ կը հեռանայի :

Շատ անգամ մութ երկնից վրայի աստեղաց պարուն հիանալու, ծառերու ճիւղերուն քաղցր ճարճատունները և երկայն տերևոց ներդաշնակաւոր սօսափիւնները լսելու համար պահ մը կանգ կ'առնէի . որոնց մէջէն այծեամ մը մերթ ընդ մերթ մեր աղմուկներէն վախցած գիշերուան հորիզոնին մէջ փայլակի մը պէս կը պանար և կ'անհետանար :

Առտու մը աշխատութենէ սարսըռած և մտաց յափշտակութենէն բոլորովին դողդուլուն, ցախի և մշտադալար կաղնիի անտառի մը եղըր կանաչագեղ, ոսկեղօծ կոկոններով և մարդարտածաղիկներով զարդար-

ուած փոսի մը յենարանին վրայ քնացայ :

Ընկերներս իրենց անասուններով անտառը թողած էին առանց զիս հոգալու :

Ես, իրենց եղբայրը, իրենց հաւասար էի, այլ եթէ հրէայ մը, դատապարտեալ մը : Տանջելոյն որդին մնաց մինակ ինձ սպասելու :

Քնացած էի և ծիրանաձեւ արծաթէ ժապաւենով մը խոտորնակի կարուած հրեղէն կամարի մը տակ կ'երազէի :

Ո՛վ տէր, քերովբէներէն երկու ծայրերը բռնուած այս ճերմակ կամարին ետին քու պայծառութեանդ ցորմունքը կը տեսնէի :

Եւ կուրնալէ վախնալով ձեռներս աչացս վրայ դրի և աղաղակեցի .

« Տէր, զիս մի սպաններ . ես որդիդ եմ պատրաստ ընդ միշտ քեզ հնազանդելու » :

Այն ատեն առջիս բոլորովին բոցերով շողջողուն մարդ մը տեսայ որ ըսաւ ինձ .

« Քեզ լսեցի որդեակ իմ, դու պիտի մեռնէիր բայց պիտի ապրիս :

« Պիտի ապրիս, պիտի տանջուիս, հոգւոյս խորը պիտի թափանցես և գոյութեանս դաղափարով մեծութիւնս պիտի հրատարակես :

358





« Ելիր , դօտի ընդ մէջ անձ , մի կենար այս գիւղին մէջ ուր իմ սքանչելագործութիւնս գահ չ'ունի :

« Դ՛ու մինակ և մայրդ ինձ համար ձեր սրտերուն մէջ սեղան կանգնեցիք :

« Ելիր և մեկնէ :

« Բանէ մը մի վախնար , ես քեզ հետ եմ :

« Քեզ պիտի ընկերանամ և չը պիտի թողում որ ճամբոյ մէջ մնաս » :

Ըսաւ և անհետացաւ : Արթնցայ :

Արջալոյսը կ'երնէր պայծառութեամբ իւր հրեղէն հաղարումէկ խանձարուրներէն :

Երբէք ես չը տեսայ այսպէս արջալոյս :

Յանկարծ մարդկային ձայն մը ( ասի իմ խեղճ Մաթիս բարեկամիս ձայնն էր ) զիս իմ անուամբս կոչեց : — Ո՛ւր ես ըսաւ . ո՛ւր ես , լուսցաւ պէտք է մեկնիլ :

Այն , ըսի . լուսցաւ մեկնիլ պէտք է : Աստուծոյ ձայնը քու բերնէդ խօսեցաւ :

Բարեկամ , կը մեկնիմ , կը թողում այս գիւղը : Եկ՛ուր , գրկեմ զքեզ անգամ մը : Դու մինակ , դ՛ու զիս քիչ մը սիրեցիր , վասն զի դու ալ ինձ պէս թշուառ ես :

— Եւ ո՛ւր կերթաս :

— Աստուծոյ քով :

— Աստուած ո՛ւր է , հարցուց Մաթիս :

— Կը կարծէի թէ երկինքն է , բայց և այնպէս երկրիս վրայ ալ է . զայն հիմայ տեսայ . կը տեսնեմ դեռ զայն սրտիս մէջ : Քու սրտիդ մէջ ալ ըլլալու է : Ամեն տեղ է :

Ո՛հ , ո՛չ , ըսաւ Մաթիս , սրտիս մէջ միայն վիշտ և անձկութիւն կայ : Երբէք քու Տէրդ չ'եմ տեսած :

— Տէրը որբերն ու թշուառները կը սիրէ , կ'ըսէ Ս . Գիւրքը :

Եկուր ինձի հետ , Մաթիս , քեզ պիտի ցուցնեմ զԱստուած որ քեզ պիտի սիրէ , պիտի սովորեցնեմ քեզ ինչ որ ինձ ուսոյց և պիտի ըսեմ քեզ ինչ որ ինձ ըսաւ :

— Հայրս կիյօթիմով սպաննուած է , քու Տէրդ զիս չը սիրէր :

Այն իրիկունէն տարի մը ետքը , միամիտակ մեկնեցայ ի խնդիր Աստուծոյ :

Մաթիս 17 տարուան հասակին մէջ այնպիտի ծառէ մը սպաննուեցաւ որ կ'ուղէր նոյն անտառին և նոյն տեղւոյն մէջ կարելի զանի :





Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Մ

Գ

Տէր Աստուած, դու բոլոր էութեանց մէջն ես, առանց քեզ բան մը կարող չ'է գոյանալ:

Դու յաւիտենական միակ շարժում մ'ես որ սուտ գիտունները կը փնտռեն, ցորեկ ատեն արեգակը փնտռող ճշմարիտ կոյրերու պէս:

Վասն զի ամեն զորութիւն շարժում, ամեն շարժում շերմութիւն, ամեն շերմութիւն լոյս և ամեն լոյս բանավարութիւն է:

Դու մարդը քու պատկերիդ նման ստեղծեցիր և նորա քու բանավարութենէդ նըշոյլ մը տուիր:

Ա.ՆԱ. ԲՈՒ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԿ:

Լոյսն էր որ Մովսիսի բորբոքեալ մացառին մէջ ցոլաց:

Նաև Սինա լեռան փայլակը:

Եղիսէի հրեղէն կառքը:

Եւ վերջապէս այս այն լուսաւոր շաւիղն էր, ուրկէ դու Յիսուսին երեւեցար:

Ո՛ր Տէր, անոնք որ կըսեն թէ մի և նոյն բնութենէն չ'ես, ի սկզբանէ անբան բռնաւորներ են:

Զքեզ չը ճանչնալով կը զրպարտեն:

Որպէս զի ճնշելու կարող ըլլան, որովհետև կառավարել չ'են գիտեր:

Վասն զի եթէ դուն առաջին մարդկանց համար նոյն ստեղծիչը եղած չ'ըլլայիր:

Եթէ դու ինքզինքդ յայտնելու համար սպասէիր որ մարդկութիւնը որ և է տարիք մը ունենայ, անիրաւ պիտի ըլլայիր:

Մահկանացու և փոփոխ էակի մը մտացածին հաճոյքներն ու կիրքերը պիտի ունենայիր:

Բանավարութիւն պիտի ունենայիր իսկ ԲԱՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ չը պիտի ըլլայիր:

Եթէ ապագայ մարդոց օգտին համար բնութիւնը փոխելու պէտք ունենայիր, քու զաւակացդ համար անգութ բռնակալ մը պիտի ըլլայիր որ ապրած և մեռած են այս ժամանակէն առաջ:

Դու ամեն ատեն մարդուն միջոց տուած



չը պիտի ըլլայիր որ բանավարութեամբ ըզքեզ ճանչնայ և քու գործքերդ սիրելով զքեզ սիրէ :

Դու այլ և այլ կրօնքներու թշուառ տուր և առ մը պիտի ըլլայիր :

Նոքա քու պայծառութիւնդ կը նսեմացնեն, մինչև ի քեզ ի վեր ելլելու համար քու մեծութիւնդ կը նուաստացնեն, որպէս զի իրենցմէ լաւ եղող իրենց ընկերներուն վրայ ունեցած քու կարողութիւնդ յաւիշտակեն :

Դժնդակ տէրեր, որք իրենց ծառաներէն սարկութիւն կը պահանջեն և իրենց համար ալ անսխալականութիւն՝ :

Քու անուամբդ իշխելու համար է որ իրենց պատկերին համեմատ կերեւակայեն զքեզ :

Մինչև ե՞րբ, Տէ՛ր, պիտի ներես այն ըստորին մարդկանց՝ որոնց մէջ դեռ քու հոգիդ թափանցած չ'է՝ որ զքեզ այս աստիճան այլակերպեն և յանուն քու սիրոյդ ատելութիւն քարողեն :

Ա՛հ, եթէ բանավարութենէ զատ մահկանացուի մը ուրիշ կերպով ինքզինքդ յայտնէիր, այն ատեն երկնից կամարը պիտի ճեղքուէր և անոնց վրայ պիտի հալէր :

Որպէս զի արմատախիլ լինին իրենց սըտութիւնները, պատուհասին իրենց չարութիւնքը, ջախջախուին իրենց կուռքերը և իրենք ու իրենց անիրաւութիւնքը քու սըրբանուէր սեղաններէդ վանուին :

Երեւցիր ուրեմն Դու քու բոլոր զօրութեամբդ և բոլոր ճշմարտութեամբդ :

Լուսեղէն ամպիցդ մէջ երեւցիր իրենց բաց իրենց քու հոգւոյդ խորերը ուր թեւատարած կը կենան մեծերը, արդարները, աշխատողները, անցեալ դարուց բոլոր ժողովրդեան, հաւատոց և բոլոր երկրային գօտիներուն իրաւագէտ և սիրող անձինք :



Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Մ

Դ

Ժողովուրդ տիեզերաց, ձեր բանավարութեամբն ինձ մտիկ ըրէք, և ձեր հոգւով ինձ նայեցէք :

Երբէք ֆրիստոնէի մը, Հրէի մը, Մահմէտականի մը ծննդեան մէջ որոշեալ նշան մը եղած է :

Երբէք Հրէայն թլիսատեալ աշխարհ եկած է, նոյնպէս ֆրիստոնեայն կուրծքին վըրայ խաչով մը և Տաճիկը ճակտին վրայ մահիկով մը :

Եթէ Տէրը ուզէր նախապատիւ սիրով և կատարեալ հաւատքով մը որ և իցէ արարած մը նշանակել, միթէ նոյն բնութեան մէջ զանի ցուցները անկարելի պիտի լինէր իրեն :

Ինչպէս մարդը անասունէն, անասունը բոյսէն, և բոյսը մետաղէն որոշեց :

Երբէք ֆրիստոնեայն, Հրէայն, Մահմէ-

տականը, կինուացին, Հնդկաստանցին իւր հաւատքովը՝ մահուան, վշտի, հաւասար օրէնքէն խոյս տուած է :

Ինչո՞ւ ուրեմն ժողովուրդ մը ուրիշ ժողովուրդ մը կատէ. վասն զի կեանքէն ի մահ բանավարութեան լուսոյն համեմատ ստեղծիչ մը կ'ստեղծէ իրեն : Մ'յն բանավարութեամբ որ իրեն կը գայ, չը գիտէր թէ ո՞ւր կէ և թէ կ'երթայ չը գիտէր ո՞ր :

Մնամոյ մը մոթթը կը յարգուի թէ աշխատութիւնը :

Ի՞նչ հարկ կայ ուրեմն մարդս՝ իւր բանավարութիւնն եղող հաւատքովը յարգել և ոչ իւր գործքովը :

Երբէք գտնուած է մահկանացու մը որ առաքինութիւնը ուրանայ թէ և այդ առաքինութեան աստուածը նա ալ ուրացած ըլլայ :

Չենէ ո՞վ ուրեմն ամենաուժեղ երիտասարդութեան մէջ, ամենէն արբեցուցիչ հեշտութեան ծոցոյն մէջ, ամենաբարձր իշխան կատարը և ամենէն ճառագայթարձակ փառաց սրտին մէջ կենաց ոչնչութիւնը չէ զգացած : Ո՞վ երբէք կարողացած է հաճոյք մը կեցնել, ըսելով իրեն « կեցի՛ր » :

Եւ ո՞վ ուրեմն նիւթական այս անկարո-



ըութեանց հակառակ իւր լանջքին մէջ ճրչմարտ Աստուածը չ'է զգացած :

Բանավարութեան պտուղը եղող սրտի գոհունակութենէն աւելի երկրիս վրայ ուրիշ երջանկութիւն մը գտնուած է :

Մարդուս վրայ իւր գիտակից բանավարութենէն իզատ ուրիշ յայտնութիւն մը կայ :

Այն բանավարութիւնը՝ որ ղինքը միայն բնութեան թագաւորը կ'ընէ :

Նիւթի թագաւոր՝ որ Տէրն իրեն համար ստեղծեց որպէս զի զանի իւր հարստին շքնչովը կենդանացնէ, ինչպէս որ ինքը մարդս ~~ստեղծեց~~ շնչով կենդանացոյց :

Քանի որ մնայուն Արարիչը ամեն տեղ մի և նոյն է, ինչո՞ւ համար վայրագ, ազգային և տեղական աստուծոյ մը անուամբ դուք զիրար կ'ատէք, կը նախատէք և զիրար կը սպաննէք :

Եթէ բանավարութեան համաձայն և աւելի աստուածապէս մարդկային կրօնքը ձեզ աւելի լաւ կերեւի, ուրեմն աւելի լաւ եղիք :

Աստուածային գերագունութեան ուրիշ ապացոյց չըկայ :

Փոխանակ ատելու սիրեցէք, խիստ սիրեցէք, ի բարին սիրեցէք : Եւ երկրիս վրայ

իւրաքանչիւր տուն ձեր սիրոյ Աստուծոյն երկիրպագելու համար տաճարի թող փոխուի :

Չարը բարւոյն սէրէն կը վախնայ :

Այն բանը որ զմարդիկ չը միացնէ՝ ի բանավարութենէ չը բղխի, և այն բանը որ բանավարութեան հակառակէ՝ Աստուծ մէջըդար :

Հալածող կրօնքը մահկանացուի մը գործն է : Եւ մահակը ստեղծած է զայն և ժամանակը զայն պիտի ջնջէ :

Սէրը միայն ժամանակին կը դիմադրուէ :

Սէրը միայն միջոցը կ'ոչնչացնէ :

Սիրող մարդը միայն աստուածային գըլուխ գործոցն է :

Բայց նա՞ որ յանուն Աստուծոյ ինքզինքը բացարձակ կանուանէ, նա՞ որ իւր մերձակայն յանուն Աստուծոյ կը մատնէ, նա՞ որ յանուն Աստուծոյ զայն կը նուաճէ և իւր իրաւամբը զայն կը հարստահարէ :

Նա՞ որ յանուն Աստուծոյ վարդապետութիւն մը անոր վրայ կը դնէ :

Աստուծոյ վրայ իւր անձը միայն տեսած է : Իւր հաւատքը կը կոչուի, անձնասիրութիւն :

Իւր սէրը, բռնակալութիւն եւ իւր գործը, ոչնչութիւն :



Տէր, եթէ ոմանք զքեզ կարող արեղայի մը պէս կը նկատեն, որուն միայն ականջ ունին, միւսները իրենց մարմնոց ծուլութիւնները, իրենց սրտին հեշտութիւնները և իրենց հոգւոց ցոփութիւնները բարձրացնելու համար մարտի հրաւիրի գրգռմամբ ըզքեզ նուաստացնել կը ջանան :

Եթէ իրաւ է որ, նոքա կ'ըսեն թէ դու երիտասարդութեան ատենդ բարի բան մը ստեղծած ես :

Այժմ ահա ծեր ես և երկրագունդը գէշ աղէկ իւր ձգողական զօրութեամբն իւր առանցքին վրայ կը դառնայ :

Դու, գերագոյն բանավարձութիւն, դու քու որդւոյդ այս բանավարութենէն լոյս մը տուիր : Իսկ նա զայն զքեզ ուրանալու կը գործածէ :

Նա այն գիշերուան աստղն է որ իւր լոյսը արեգակէն կ'առնու և կ'ուրանայ օրը, վասն զի մէկ վայրկենի մէջ գիշեր կ'ըլլայ :

Տէր, դու մարդուն ի քեզ տարակուսելու ազատութիւնը տուած ես. այն ազատութիւնը որ քու մեծութիւնդ կ'արտադրէ :

Տարակոյսը անոր չըբաւէր :

Ոչնչութիւնը կը հաստատէ զայն :

Բարւոյն անկարող, զքեզ կ'ամբաստանէ թէ չարը կը պաշտպանես :

Կըսեն թէ, դու անդու Սատուած մ'ես, վասն զի մարդիկ յանուն քո յանցեալ են և յանցանքն դեռ սոսկալի չարութիւններ :

Վասն զի մարդիկ զիրար կ'ատեն և զքեզ չ'են սիրեր :

Եւ որովհետև զիրար կը կուրցնեն, զքեզ չ'են տեսնար :

Եւ քանի որ կը ջանան միմեանց ստել, զքեզ կ'ուրանան :

Չարը կըսէ. « Ինչ որ ուղեմ կրնամ ընել, կրնամ ստել, վատահամբաւել, դրացւոյս ինչքը, կիներ, աղջիկը և ազատութիւնը կողպտել :

« Հերիք է որ մարդիկ զիս չը տեսնեն. Աստուած զանոնք չը տեսնէր :



« Աստուած չ'կայ :

« Եթէ լինէր իմ ընելիք չարութեանցս խորհուրդը և իրաւունքը չ'էր առներ ինձմէ :

« Կը թողուր որ ընեմ ես այսպէս :

« Իւր կայծակը վրաս չ'արձակէր :

« Իւր արդարութիւնը վրաս բանեցնելով չ'էր յայտներ ինձ զայն : Խղճալի՛ Տէր » :

Մնասպարծութիւն :

Այս վայրկեանիս մէջ կը վախնայ, որովհետեւ զքեզ տեսաւ :

Իւր մթագին բանավարութիւնը ըյս մը կ'արձակէ. դու իրեն կ'երեւես, ո՛չ թէ իբր դատաւոր, այլ իբր հայր :

Դու անոր ըսիր. զգուշացի՛ր որդեակ իմ, դու կը մոլորես :

Ձը գիտէր թէ դու բանավարութիւն ես և նոյն իսկ օրէն : չը գիտէր թէ օրէնքը հըպարտին վրայ հարկ ընդ հարկ ծանրանալու համար իւր տրամաբանութեանը հակառակ չը գործէր :

Երբէք լծակ մը իւր գործած տեղը արգիւնք չ'արտադրէր :

Եամանակը գործողութեան հետ այնպէս է՝ ինչպէս հեռաւորութիւնը լծակին հետ :

Ձը գիտէր թէ տարակուսանաց այս ա-

ռաջին վայրկեաններուն մէջ, Արարիչ Տէր, դու կը պարծիս այն գործքիդ վրայ որ չափէն դուրս կ'երնէ, որ միշտ միակ կը խորհի, որ առանց սահմանի կը քայլէ, նման այն մօր, որ կը հրճուի իւր տղուն կանգնելը և իւր անզօր ձեռնովը իրեն սպառնալը տեսնելով :

Քանի՛ քանի ես այն թշուառներէն տեսած եմ որք ամբողջ տարիներ թողած ես թէ ուզածնին ըսեն և ընեն :

Արդարութիւնը իւր յապաղելովը աւելի արդար եղած է :

Քանի՛ քանի այն բարձր և ստորին ատիճանի տէր եղող, յանդուգն և երիտասարդ ծաղրածուններ լսած եմ, որք իրենց թուխ գլուխը տարփաւոր կուսանց սպիտակ ծոցերուն մէջ հանդէպնելով զքեզ կը ծաղրէին :

Արբեցնող վրիժուրէ լի բաժակներ պարպելով յանդուգն գրգիռներ քեզ դէմ կ'արձակէին :

« Յաւիտենական չը կայ կ'ըսէր մին :

« Կնոջ սէրն է յաւիտենական, զի նա միայն կը մեռնի վերածնելու համար :

— « Արարչական տարր չը կայ, կ'ոռնայր միւսը. միմիայն գինին է որ կ'եռայ, կը չաչէ և կը ցաթկէ :



« Գինին երակին մէջ կը սուզի, ոգւոյն մէջ կը կարմրնայ ։

« Գինին բանավարութենէն աւելի զօրաւոր է, վասն զի զայն կը նուաճէ ։

« Գինին Ամենակարողէն աւելի կարող է, զի զայն մոռցնել կը տայ ։

« Կեցցէ՛ գինի, հեղուկներու աստուածը, որոյ մարդարէն է նոյ ։

— « Այս աշխարհս ոսկիէն ուրիշ տէր չ'ունի, կ'ըսէր երրորդ մը ։

« Ոսկին երկրիս բացարձակ թագաւորն է ։

« Ոսկիէ բանալի մը սրտերը կը բանայ, ոսկիէ գաւազան մը միտք կը տայ կամ զայն կ'առնէ ։

« Ոսկին գինիէն և սէրէն աւելի զօրաւոր է, վասն զի զանոնք կը դնէ և գերի կ'ընէ ։ Ոսկին ճշմարիտ արարիչ է ։ Ամեն բան կը շինէ և կ'աւրէ ։

« Քահանային պատգամները և դատաւորին օրէնքները կը ներշնչէ ։

« Չը կայ առաքինութիւն մը որ չը տկարանայ, չը կայ մեծութիւն մը որ չը փոքրը կանայ, չը կայ հոգի մը որ ոսկիին առջև չը կակղանայ ։

« Նա կը ծռէ ինչ որ կանգուն և կը

կանգնէ ինչ որ հակեալ է ։

« Կը բարձրացնէ ինչ որ խոնարհ է և կը նուաստացնէ ինչ որ բարձր է ։

« Ոսկիէն զատ ամեն ինչ եղջերուաքաղ է ։

« Ծերութիւնը ոսկիին շնորհիւ երիտասարդութեան հաճոյքները կ'ստանայ ։

« Նոյն իսկ մահը, ոսկւոյ համար դիմակ մը կը դնէ, և կեանք կը կեղծէ ։

« Կեցցէ՛ ոսկին, զի եթէ աստուած մը կայ, այն ատեն արժէք կ'ունենայ երբ ոսկեղէն լինի » ։

Այս ոսկիէ, գինիէ սէրէ, յղիացեալ սեգը մբիշներուն գլխէն հազիւ քսան տարի անցաւ ։ Մերթ ընդ մերթ ես նոցա ասուերներու պէս առջևէս անցնելին կը տեսնեմ ։

Մէկը մազ չ'ունի, միւսը կուրցած, երրորդը անդամալոյծ, չորրորդը աճուն խոլեր ստացած, հինգերորդը արքունի թիարանը գացած, վեցերորդը եթէ առաջուրնէ ինքզինքը չը կախէ առաջինին քովը պիտի երթայ և եօթներորդն ալ ինքզինքը կախած է ։

Կըսէին թէ իրենց երիտասարդութեան ատեն փառամոլ էին ։

Տէր, դու այս փառամոլութեան մէջ



ամենեկին մաս մը չ'ունէիր : Ասոնցմէ ոչ ոք  
զբեզ կը փնտռէր :

Նոքա քեզ կարօտութիւն չ'ունեցան ,  
աստուածային աշխատութեան արբեցուցիչ  
լուծին և աշխատող հոգւոյ նուիրական քըր-  
տանց տակ երբէք ցնծութեամբ չըխայտա-  
ցին : Սիրոյ աղչկանց տուփացող հայեցուածք-  
ներն ստանալու համար իրենց աշխատու-  
թիւնը ծախեցին :

Թունաւորեալ շնորհաց ողորմութիւնը  
մուրալու և իրենց անարգած անձանց առ-  
ջև դժնելու համար պոռնկացուցած էին ի-  
րենց միտքը :

Նոքա դեռ երիտասարդ են տարւօք ,  
բայց կանխահաս ծերութեան բորբոսը իրենց  
գլուխը ճերմկուցած և իրենց սիրտը ծըթ-  
ռած է :

Կէ մահը արդէն ողջ ողջ նոցա տիրած է :

Ոմանք կենդանի մեռեալներ են , և ու-  
մանք ալ որդեր՝ որ զանոնք կը կռծեն :

« Արարիչ հոգի չըկայ , կ'ըսեն դեռ , չ'էք  
հաւատար նէ մեզ նայեցէք , այս է մարդ  
ըտուածը , իւր գլուխ-դործոցը : Աւելի ա-  
ղէկ չ'ըպիտի ըլլար որ մենք փիղ մը և կամ  
կուղբ մը ըլլայինք » :

Այո՛ , յիրաւի փիղը նուազ արդահաստե-  
լի է , նոյնպէս շունը և կատուն : Նոքա չ'են  
ապականիր , այլ եղածնուն պէս են :

Բայց մարդիկ բուռն կերպիւր հոգւոյն  
կապերը խզած են , այն նշան զոր դու գոր-  
ծին մէջ դրիր , որպէս զի քու անունդ թըր-  
թըռայ . այն կենդանի տաւիղը որոյ առանց  
արձագանդի կոթը միայն մնացած է այժմ :  
Բանավարութեան վանակը ցոփութեան  
ցեխով աղտեղած են :

Աստուածային քրտանց կաթիլները , նո-  
քա աղտեղի փրփուրով պղծած են :

Փառաց համար ապրող և մեռնող մեծ  
քարոզիչներուդ գերբնական ճիգերը ծաղ-  
րած են :

Այն փառաց՝ որ անմահ կենաց մէկհա-  
տիկ հիւթն է և գործէն առ գործողն կ'ենէնէ :

Անասունը նուազ գթալու է քան այն մարդը  
որ զբեզ չը տեսնէր և որ ինքզինքը ի քեզ  
չը տեսնար :

Ամենալաւ հայր մը իւր շունը լաւ կը սի-  
րէ , քան այն տղան որ իւր սեռին և ցեղին  
ամօթ կը պատճառէ :

Խիղճը կիսով չափ ընկզմնեալ մերթ ընդ  
մերթ ճիգ մը կ'ընէ անոնց սրտին սևութեան



մէջ ծագելու համար :

Այն ատեն անոնք կ'ըսեն . « Ուրեմն ես  
ալ ինքս չ'եմ » :

Եւ իրենց իշխանութեանը վրայ համող-  
ուելու համար շուտ մը չարիք մ'ալ կ'ընեն :

Այսպէս ծեր աւագակ մը անմեղ կոյս մը  
բռնաբարել կը փորձէ : Եւ ամօթէն ու ան-  
կարողութենէն կ'սպաննէ զայն , իւր ոճրոյն  
և իւր զօրութեանը հաւտացնելու համար :

Եթէ անոնցմէ մէկը մեռնի , միւսները  
արտասուքներ փոխ առնելով , իրենց նմանող  
մեռեալին փառքը կը գովեն : Կը կարծեն  
թէ պատուոյ խաչեր շինելու պէս , փառք  
շինել ալ տրուած է իրենց :

Իրենց սրտին մէջ անոնք աղէկ գիտեն  
որ այդ փառքը միայն մէկ օր կը տևէ : Այս-  
պէս մի զմիով ելանելով կը կրկնեն .

« Աստուած բառ մ'է : փառքը գործը ի է  
և մարդն ալ երկոտանի անասուն մը » :

Խափշիկի մը պէս կ'աղաղակեն . « Ամեն  
մարդ սև ըլլալու համար ծնած է , ճերմակը  
առժամանակեայ գոյն մ'է » :

Աւանդ , այս փառքը բանասիրականի օր  
մը չը տևէր : Հետեւեալ օրն այս մարդուն  
ամեն բանը մեռած է , իւր անցեալը , ներ-

կայն , ապագայն և մինչև իսկ իւր ստուերը :

Եւ բոլոր իւր եղբայրները զայն մոռցած  
են , վասն զի իրենց բան մը չը թողուց և ոչ  
իսկ սիրոյ յիշատակ մը :

Իւր ընկերներն ալ զայն կը խծրծեն ,  
վասն զի մեծ գործքով մը անոնց ինքզինքը  
յարգելի հանդիսացուցած չ'է :

Բոլոր իւր ժամանակակիցները կը մոռ-  
նան , և միայն կենդանի գայթակղութեան  
վրայ կ'ըբաղին :

Նոյն իսկ իւր որդիքը իւր յիշատակը  
չ'են օրհներ :

Եւ շատ անգամ կ'անիծեն զայն :

Իւր կինը քենէ շնորհակալ կըլլայ , ո՛  
Տէր , որ դու վերուցիր իրմէ իւր բռնա-  
ւոր և հրամայելու անարժան տէրը :

Եւ եթէ նէ իւր այրէն առաջ մեռնէր ,  
այս անօրէն և անհաւատ տխմարին ձեռքէն  
աղատած ըլլալուն համար իւր շնորհակալիքը  
ի քեզ պիտի ուղղէր :

Տէր , զթա՛ նոցա , վասն զի անոնցմէ վար  
նողկալի ցեղ մը կայ դեռ ևս , սերունդ մը  
որ աւելի չարագործութիւն կ'ընէ յանուն քո ,  
քան բոլոր այս Սկեպտիկեանները իրենց կե-  
նաց մէջ :




Ո՛հ, ի՛նչու մարդս ստեղծած ատենդ նորա ազատութեանը չափ բանավարութիւն ալ չը տուիր: Ինչո՞ւ համար այնչափ կարողութեան հետ նոյն չափ անկարողութիւն միացուցիր:

Որովհետեւ մարդս դաճած՝ թէ զքեզ օրհնէ և թէ անիծէ, երբէք ամենափոքր վընաս մը չը կրնար ընել քեզ:

Ամեն մարդ թէև իրարու վրայ ալ ելլեն, քու էութեանդ ծայրին չը պիտի հասնին, թէև անապատի պէս երկայն սուրբեր ալ ունենան:

Որչափ մեծ ես դու, Տէր, և մարդս փոքրողի է:



Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Ս

Ո՛վ Տէր, ի խորոց սրտի շնորհակալ եմ որ տկար ձայնիս լսեցիր և քու բանավարութեամբդ ինձ պատասխանեցիր:

« Ես եմ այն որ եղաւ, այն՝ որ է և այն որ պիտի ըլլայ:

« Ես յամենայն ինչ եմ և ամեն ինչ ինձ մով է:

« Հողին և նիւթը ո՛չ այլ ինչ են քան եթէ էութեանս երկու դէմքերը: Մէկը առանց միւսին չը կրնար գոյանալ:

« Նիւթը լոյս է, որ կ'ըլլայ մետաղ, բոյս, կենդանի և մարմին:

« Հողին՝ լուսաւորեալ, բորբոքեալ, ելլեքտրականացեալ և բիւրեղացեալ նիւթ է:

« Ես եմ որ այս կենդանացեալ երկինքը ստեղծեցի, որ կ'արծարծի, կը բոցակիզէ և կը լուսաւորէ ամեն ինչ:



« Ես եմ հոգւոց հոգի, զօրութեանց զօրութիւն, շարժմանց շարժում, ջերմութեանց ջերմութիւն և լուսոց լոյս :

« Ես էակաց Լին եմ, ամեն արարածոց, հոգւոյ և մարմնոյ Սրարիչը :

« Ամեն ժամանակ ստեղծած եմ և ամեն ատեն պիտի ստեղծեմ :

« Եզան անանկ մարդիկ որ զիս լաւ տեսան քան զայլ :

« Մարդը որ աւելի մարմին է քան հոգի, աւելի զգացում քան բանավարութիւն, աւելի ջերմութիւն քան լոյս, զիս չը տեսնէր, այլ լոկ կ'զգայ :

« Սրտաքին պատճառներէ իւր վրայ արտադրեալ հաճոյից կամ ցաւոց համեմատ կը դատէ զիս :

« Իրմէ վեր է այն մարդը՝ որ զիս իւր պատկերին համեմատ կ'երեւակայէ : Էակաց անհաւասարութունը տեսնելով և ինքզինքը իւր եղբայրներէն վեր համարելով, զօրութիւնները շատ մը աստուածներու կը փոխանարկէ և անոր վրայ աղէտականներ և գերիներ կը յօրինէ :

« Ուրիշներ՝ որ բանավարութեանս նշոյլներով զանգեցի, իմ էութեանս և բոլոր ա-

րարածոց միութիւնը տեսած են :

« Մարդկանց հաւասարութիւնը և զՍտուած հրատարակած են :

« Ուրիշներ ալ, որք իմ ընտրածներս են, էութեանս ամենէն խորը կը թափանցեն :

« Էութեանս կենդանի նշխարներ, տեսան թէ այն բանը որ կը դոյանայ, այս էութեան մէկ հետքը կը կրէ :

« Ճանչցան որ ես զանոնք ստեղծած եմ, լոյս և հոգի, իրենց ստորին եղբարց ջերմութիւն և կեանք տալու համար, ինչպէս որ ստեղծած եմ արեգակը ամեն բանի մէջ շիթ առ շիթ քամուելու համար :

« Վասն զի մետաղը, տունկը, անասունը, մարդը և ամեն ինչ իմ լոյսս կը ծծէ :

« Լոյսս է որ ամեն գոյութեանց հոգի կը տայ :

« Անոնք հասկցան թէ մեծերը՝ փոքրկանց համար միայն մեծ են, ուժեղը տկարաց համար զօրաւոր, գիտունք տգիտաց համար գիտուն և թէ՛ ես մարդկանց համար Աստուած եմ :

« Վասն զի մարդկութեան ծառայելու համար Տէր եմ : Էւ դու նոյնպէս, որդեակի իմ, դու իմ լուսոյս մէկ մասնիկն ես :



« Ասոր համար է որ դու իմ երկնային կրակովս կը բորբոքիս: Դու կը պարտիս վառուելով, լուսաւորելով և քենէ ստորին արարածոց մէջ մարմնանալով ինքզինքդ սպառել: »

« Աշխատէ որ հանուր մարդկութեան, այն է՝ իմ զաւակացս արժանի եղբայր լինիս, զորս խորհող արեգակներ ստեղծեցի մարդկութեան կամարէն կախուած, երկրին վրայ իմ շուրջս ձգուելու համար: »

« Դու ճիշդ ըսիր: Ի յաւիտենից ունեցած եմ իմ ընտրեալ զաւակներս: »

« Բայց ստորին մարդիկ միշտ կըրցած են և կրնան դեռ իմ իրենց տուած ազատութեամբս դէպ յիս բարձրանալ և մեծնալ: »

« Օր պիտի գայ, որ իմ ձեռագործս եղող մարդկութիւնը այնչափ ազատութիւն, բանավարութիւն, սէր, բաղդ, հանգիստ և այնչափ երկար կեանք պիտի ստանայ, որ մարդկանց վերջինը իւր գլխովը պիտի դըպչի իմ ոտներուս գարշապարին: »

« Այն ամեն էակները որ ստեղծեցի պիտի վերածնցնեմ զանոնք, որպէս զի աստուածային խնճոյից կարենան մասնակցիլ: »

« Վասն զի ես իմ գործքերս յաւիտենական ընելու համար յաւիտենական եղած եմ: »

« Իմ բոլոր աղօքէ ընտրածներս, իրենց գողափարականին մէջ այս երանութիւնը տեսած են: »

« Ասոնցմէ մէկ քանին այն աստուածային թուականը երազած են, որ մարդկութեան սկիզբը եղած լինի: »

« Բայց անոնք սխալած են: »

« Աղատ էին սխալելու: »

« Ազատութիւնը սխալանաց համար է: »

« Մարդուս մեծութիւնը բանավարութեան անկախութեան մէջն է: »

« Ծառաներ՝ որ աղատապէս յիս չ'են գար, չ'եմ ուզեր զանոնք: Աղատ են զիս ուրանալ, չը ճանչնալ, ինձ հայհոյել և զիս զրպարտել: »

« Երբէք մէկու մը թոյլ տուած չ'եմ որ զիս ուրիշի մը դէմ պաշտպանէ: »

« Հայհոյիչ է նա, որ զիս զրպարտող իւր սեռէն մէկը կը պատժէ: »

« Ո՛վ որ զայն մեռցնէ, մարդասպան մ'է: »

« Դու իսկ շատ անգամ սխալեցար: »

« Ներէ՛ ուրեմն քու եղբորդ սխալներուն: »

« Փառարանէ զիս քու սիրովդ և ո՛չ ատելութեամբդ: »

« Իմ ծառաներուս ծառայելով ինձ ծա-



ուայացած կ'ըլլայ մէկը: Արարչին համար կ'ապրի, երբ նորա գործոց համար ապրի:

« Աստուած մարդկային սիրոյն մէջ կը փթթի: »

« Ուրեմն քու ողբերդ ինձ մի բարձրացնելու . զիս մի ամբաստանել թէ սնտոի կուռքերու թոյլ կը տամ և իմ անուամբս բռնակալող չարերը կը պաշտպանեմ: »

« Կուռքերը, այո, ես զանոնք պիտի խորտակեմ. զանոնք պիտի այլափոխեմ և մի մոռնար որ չարերը սիրելուս համար է որ կը պատժեմ: »

« Անասուններուն և թռչուններուն լեզուն հասկցամ՞ ես երբէք: »

« Արդեօք ականջդ բուսող խոտին, մաքնջող ծաղկին, երգող ծառին և արտասուող ժայռին վրայ դրամ՞ ես: »

« Հարցո՛ւր ուրեմն քու գիտուններուդ թէ ինչո՞ւ նիւթի մը ո՞ր մասը հող, ո՞ր մասը աղամանդ և ո՞ր մասն ալ մարմին է: »

« Եթէ դիպուածով է, հարցո՛ւր թէ ինչո՞ւ բաղբը իրենց այնչափ անհաւասար իմացականութիւն և նիւթական զօրութիւն տուած է: »

« Հարցո՛ւր թէ ջերմութիւնն ու շար-

ժումը ո՞ւսկից կը գան: »

— Արեւէն: »

« Հարցո՛ւր դարձեալ թէ արեւը ո՞ւսկից կը գայ: Եւ երբ կարգը իրենց գալով քեզ իմ ուսկից գալս հարցնեն, ըսէ՛ անոնց թէ թող փորձեն նախ ինձ հետեւիլ: »

« Թո՛ղ սիրեն ինձ պէս ինչ որ կը սիրեմ, նուաստանան ինձ պէս այն ամեն բանից համար՝ որ նուաստ են, թող ինքզինքնին նուիրեն ամեն անոնց՝ որք կը նեղուին, թող ուրախանան ամեն անոնց հետ՝ զորս կ'զգամ և այն ատեն Էփեսոսն Էփեսոս պատճառին վրայ փոքր գաղափար մը կ'ունենան: »

« Եւ պիտի հասկնան թէ ես ներդաշնակութիւնը անհամաձայնութեամբ, օրը գիշերով, բարին չարով, գեղեցիկը ագեղով, արդարութիւնը անիրաւութեամբ, ճշմարիտը սխալանքով, աղէկը գէշով, միտքը յիմարութեամբ և կեանքը մահուամբ ստեղծած եմ: »





Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Մ

Է

Տէր, քու էութեանդ մէջ թափանցած չ'են ամեն անոնք՝ որ կ'ըսեն թէ դու իբր պատիժ սահմանած ես աշխատութիւնը:

Քու դէմքիդ միայն մէկ կողմը տեսած են անոնք՝ որ կ'ըսեն թէ ստեղծագործութեան օրէն ի վեր երբէք չ'աշխատելով կը հանգչիս:

Ինչպէս ամեն բան քեզմով և դու ամեն բանի մէջ ես. ամեն բան միակերպ և միակ օրէնքի մը կը հնազանդի, այն է՝ շարժման:

Շարժումը զօրութեանց տեղափոխին է:

Մարդկային բանավարութիւնը լուսոյ հարկեցուցիչ ջերմութեան գերագոյն զօրութիւն մ'է, որ ջերմութենէ լոյս կ'ըլլայ և գոյնի, քաղցրաձայնութեան, ներդաշնակութեան, ու մաքի կը փոխուի:

Երէկուան ճշմարտութիւնը նոր ձև մը

առած այսօրուանին մէջն է:

Երէկուան շարժումը նոյն օրինօք այսօրուան շարժումն է, բայց ո՛չ իւր նոյն արդեւամբը: Բան մը չը կենար, և ո՛չ բան մը կայ որ ուրիշի նմանի:

Սմեն բան կը վերանորոգուի և հանապաղ:

Տէր, դու շարժում ես և հետեւաբար աշխատութիւն:

Փանօք աշխատութեան:

Տիրոջ օրէնքն է սա:

Փանօք աշխատողաց:

Եթէ Ստուած չ'աշխատէր, աշխարհս չ'էր լիներ:

Եթէ շարժումը երկվայրկեան մը կենար, լեռները փլչելով Ովկիանոսը պիտի լեցնէին:

Աշխատութիւնը բնութեան նուազն է:

Սմեն ինչ ի նմա կը թրթռայ, լոյսը յաւիտենական Տիրոջ մշտնջենաւոր թրթռումն է:

Լինիլ՝ աշխատիլ ըսել է: Նա որ չ'աշխատիր, չ'կայ. էութեան իրաւունքը չ'ունի:

Մահն ալ աշխատանք մը, տեղափոխութիւն մը, շարժման փոփոխում մ'է:

Բան մը չը մեռնիր, ամեն ինչ կը թրթրուայ, մեծ շարժատիւթին մէջ կը մտնէ:



Որչափ մարմին մը հանգչի, այնչափ իւր շարժումները նուազ կենդանի կը լինին: Որչափ նա քու էութենէդ հեռանայ, իւր թըրթըռումները նուազ վսեմ կ'ըլլան:

Երկիրը կ'աշխատի, մետաղը, բոյսը, անասունք կ'աշխատին բայց իրենց թրթռումները չ'են հասնիր այն բանավարութեան թրթռումներուն որ լոյս է և որ իւր հետքին մէջ քեզ կը դպչի:

Տէր, դու լուսոյ լոյսը, շարժմանց շարժումը և աշխատանաց աշխատողն ես:

Քարը հաղարաւոր տարիներ կը ննջէ:

Երկիրը իբր մղձաւանջ կը կանգնի:

Տունկը զարթնուլով անուշահոտ բոյր մը կ'արձակէ:

Անասունը կը հանգչի, բայց երկրէն և տունկէն աւելի կ'աշխատի:

Մարդը կը հանգչի, վասն զի իւր մարմինը դեռ նիւթը կ'զգայ, բայց արդէն իւր շարժմանց մէջ աշխատութեան մեծ տէրը կը ծանուցանէ:

Բանավարութիւնը երբէք չը հանգչիր: Երբ մարմինը թմբրի բանավարութիւնը կ'երազէ:

Երազը, երկրին շողիներովն վայրկեան

մը մթադնեալ մեծ լուսոյն աստուածային թրթռումն է:

Անասունն իսկ իւր արեան շրջանովը յաւիտենական շարժման մաս մ'ունի:

Արիւնը չը հանգչիր: Արիւնը հեղուկ լոյս է: Հանգստեան ժամանակ անգամ չը կենար:

Տէր, անոնք որ կըսեն թէ դու կը հանգչիս, կը մոռնան թէ դու միշտ լոյսը կ'ստեղծես, որ չը կայնիր և բոլոր էութեանց շարժում ու կեանք կը տայ:

Ո՛վ որ կաշխատի Աստուծոյ դործքը կը կատարէ, աղօթելէ աւելի բան մը ըրած կ'ըլլայ:

Աշխատողք, ձենէ միայն բանավարութեան լոյսը կը պակսի, որպէս զի ձեր աշխատութիւնը իւր անկորնչելի փառքովը փայլեցնէք:

Ուրախացէք, եղբարք իմ, ի ձեզ կայ անպագայն:

Մարդս քանի՛ աշխատի, այնչափ Աստուծոյ կը մօտեցնէ ինքզինքը:

Աշխատութիւնը երկնքէն կ'իջնէ և դարձեալ հոն կ'ելնէ:

Նա՛ որ չը կրնար կամ այլ ևս չ'է կարող աշխատիլ, ան է միակ թշուառը:



Այն ինչը ինքզինք առանձնաշնորհեալ էակ մը կը կարծէ, վասն զի առանց աշխատելու կրնայ վայելել :

Հանգիստը իւր գողափարականն է :

Պիտի հանդչի և աւելի քան զոր կը բաշձայ :

Մահկանացուք, կ'ուղէք երկար ապրիլ, անմահ Տիրոջ պէս միշտ ապրիլ, աշխատեցէք, աշխատեցէք իրեն պէս :

Մահը ձեզ մէկ աշխատութենէն միւսի մը, ստորին աշխատանքէ մը բարձրագունին անցքը պիտի ըլլայ :

Այն որ դուք միտք, հոգի, բանավարութիւն կը կոչէք, լոյս պիտի ըլլայ և դարուց ի դարս պիտի փայլի տիեզերաց հաստատութեան վրայ :

Ներդաշնակութիւններ, հեշտութեան քաղցր ձայներ, հոն կը թրթռան՝ ուր մեծ շարժաւիթին շարժող շարժումը կը շարժի :


Մահկանացուք, ինչպէս որ սր և է շարժում տաքութիւն, և որ և է ջերմութիւն լոյս կրնայ ըլլալ, նոյնպէս սր և է լոյս կրնայ խորհուրդ, նուագ, ձայներու ներդաշնակութիւն, գոյներու համաձայնութիւն ըլլալ : Ինութիւնը երկնային աշխատանաց մեծ

օբեկային մէկ թրթռումն է :

Բանաստեղծական բանավարութիւնը մեծ շարժման առտուածային երգի վանկ մ'է :

Զօրութիւն, ջերմութիւն, լոյս, բանավարութիւն, ներդաշնակութիւն, քաղցրաձայնութիւն, գոյն, դեղեցիկն, բարին, մեծը, ամեն բան շարժման և աշխատանաց մէջ է :

Աշխատեցէք գործաւորք և ուրախացէք : վասն զի Աստուած աշխատութիւնն է :





Այր, սիրէ կինը ոչ իբր ծառայ կամ իբր ընկեր, այլ իբր քու անձդ. աստուածային ուրիշ ձեւով մը թէ՛ իբրև քու պայծառութեանդ ցոլացումը և թէ՛ քու ցոլացմանդ պայծառութիւնը :

Երբ քու ծարաւի աչքդ իւր այտիցը ցողերը ծծէ, երբ անօթի ականջդ իւր ձայնին նուազները լսփէ, երբ քու փափաքող միտքըդ գինովնայ այն ներդաշնակաւոր ել և էջներէն որ իւր ուսերէն՝ ծոցին մէջ կը վտակին, դու կ'ընդունիս անկէ աստուածային սերմեր որ կ'ստեղծէ, կը տայ և կը բեղմնաւորէ :

Իւր գլխուն վարսերը թոթովէ և քու ճակատդ առնական վսեմ խորհուրդներ բըղխեցուր որ դայ ոսկիէ գամերով կնոջ սրտին մէջ գամուի և զայն քու կինիդ մօտեցնէ :

Զարկ քու լայն կուրծքիդ, թող հողիդ՝ եօթնալար սրբագործեալ քնարը՝ իւր ամեն արձագանգաց մէջ կրկնէ և հնչէ թէ դու Աստուծոյ որդի մը, զանգիչ մը, հունաւորէն յանհունս, նիւթէն գաղափարականի, վըտէ երջանկութեան և արտասուքէ անուշահոտ ցօղերու փոխադրիչ մ'ես :

Դու ես ուրեմն որ կը պտղաբերես, կը ծնանիս և կինն է որ կ'ընդունի, կը տեսնայ և կը յղանայ :

Այր ու կին, դուք Արարչին հետ ձեր միութեան գիծն և ամեն ստեղծագործութեանց մէջէն ամենէն դերագոյնն, ամենէն լուսաւորն ու գեղեցիկն էք :

Երբ դուք ձեր երկու էութիւնները միացնէք, երբ մարդս շրթունքէն համբոյր տալով կնոջմէն սրտի համբոյր մը ընդունի,

Երբ երկուքը մի մարմին եղած ոգիները իրարու խառնուին և իրենց անհարկուելի կորսնցնեն անհունութեան հեշտութեան մէջ,

Այն ատեն ստեղծիչ Տէրը իր երկնալոյս գործարանէն դուրս կ'երնէ : Արևն իւր ճառագայթներովն անոր կ'ընկերանայ : Բոլոր գնդիս վրայի և օդոյն մէջ եղած արարածները փառայ նուազօք զայն կ'ընդունին :



Ով կհանսոր իւր ահագին մռնչիւններով իւր Տէրը կ'ողջունէ: Լեռները կը խոնարհին, հովիտները կը բարձրանան, և անտառները վաշտի մը պէս կը շարուին:

Սմբողջ երկիրս երգերով, ներդաշնակութիւններով, ուրախութիւններով և ցընծութիւններով կը լցուի:

« Ողջոյն արարածք իմ, կըսէ Տէրը, ձեր գոյներուն ամենէն գեղեցիկ ճառագայթները, ձեր երգոց ամենէն քաղցր ձայները, և ձեր նկատողութեան ամենէն մաքուր գիծերըն ինձ տուէք:

« Լուսոյ և ներդաշնակութեան ծփումը ներ ինձ թափեցէք: Իմն է շուշանին ճերմակութիւնը, երկնից կապոյտը, ժայռաբուրդի աղբիւրին բիւրեղը, ձեր հասկերուն ոսկեգոյնը, հրեշտակի ժպիտն, ու ամպոց ծիրանին:

« Տուէք ինձ ամեն անոնք որ ձեզ համար աւելի շերմ, աւելի մաքուր, աւելի քաղցր, պարկեշտ, հեշտալի, հլու, շնորհօք, դաշնաւոր, դրաւիչ, անուշաբոյր և աւելի արբեցուցիչ են. ես բանավարութեանս մէկ նշոյլը անոնց պիտի խառնեմ և անկէ մարդկային էակ մը պիտի ստեղծեմ»:

Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Մ

Թ

Հնօրեայ լեզուները կ'անհետանան, հին օրէնքները կը կործանին, վաղեմի չասուածները կը մեռնին:

Ո՛չ ևս են երկնային ազնուապետութիւնք, մարդարէք և դից փոխանորդք:

Դու մինակ Տէր, դու կը տիրես, դու ամբողջ ես և քենէ ի զատ ուրիշ չըկայ:

Մինչև հիմա մարդիկ քեզ ծառայած չ'են, այլ զքեզ իրենց ծառայեցուցած են:

Քու անուամբդ ամեն մարդիկ ուղած են իշխել, հրամայել և վայելել:

Սոքա ինքզինքնին քու հազարապետներդ հրատարակեցին այն պատրուակաւ թէ դու այնչափ տկար էիր որ մարդկութեան պաշտօնեայ կարող չ'էիր ըլլալ:

Նոքա իրենց պատուած քու թագաւորական վերարկուէդ ընդարձակ ծիրաններ



ձեւեցին իրենց :

Եւ խեղճ ժողովուրդը չը կրցաւ զքեզ տեսնել , առ ի չգոյէ լուսոյ :

Զքեզ չը շապատեցին մթութեամբ , Տէր , որպէս զի յայտ յանդիման չը տեսնուիս :

Կրօնք վաճառողներ քու սեղանոյդ շուրջը կրպակներ կանգնեցին , ուր զքեզ կը ծախէին կտոր կտոր , կանգնով և չափով :

Ոմանք ուրախանալով և ժպտելով զքեզ կը ցուցնէին : Ոմանք ալ զքեզ տխուր , տառապեալ և արիւնաթաթաւ կը յօշէին : Ոմանք քեզ ծեր կ'ըսէին , և ոմանք ալ երիտասարդ :

Ի՞նչ տալ պէտք է Տէրը ստանալու համար որ այսչափ սրտանց կը սիրեմք , կ'ըսէր ժողովուրդը :

— Պէտք է ձեր ազատութիւնը տալ , պատասխանեցին կեղծ քահանայք :

— Իրեն հաւատալու համար ի՞նչ ընել պէտք է :

— Ձեր բանավարութենէն հրաժարիլ :

Տէր և Դու քու բարկութիւնդ չը յայտնեցիր : Վասն զի բանավարութիւնը , լոյսը և զօրութիւնը դու ես :

Ասոր տարակուսիլը հայելոյ մը առջև

ինքզինքն ուրանալ է :

— Եւ որո՞նք են մեր պարտքերը , կը հարցնէր տկարամիտը :

— Ատել մեր այն թշնամիները որք Աստուծոյ թշնամիներն են , կը պատասխանէին : Որպէս թէ դու թշնամիներ ունէիր :

Վասն զի դու մարդոցմէ բան մը չ'ես խնդրեր , զի դու նոցա ամեն բան կը տաս , զի դու ինոսա կ'ապրիս և թէ անոնք առանց քեզմով կարող չ'են ապրիլ :

Բայց օր մը դու քու մեծութեանդ պարզութեամբը ամենուն զքեզ պիտի ցուցնես :

Այն օրը դու լուսափայլ պիտի երևիս և ամեն աչքերը պիտի բացուին , ամեն սիրտ պիտի խայտան , ամեն հոգիք պիտի սարսուռին և բոլոր երկիրը ելեքորական ուրախութեամբ պիտի բերկրի նման այն տղուն որ իւր հայրը վերստին կը տեսնէ :

Այս ատելութեան ատենները լմնալու վրայ են : Սիրոյ ժամը հնչած է : Վասն զի բանավարութիւնը ի քեզ տեսնուեցաւ :

Նա իւր էութեամբը թափանցեց , խօսեցաւ և քեզ փառաբանեց :

Այն , մթութիւնը կը փախչի այգաբեր լուսոյ առջեւէն , ինչպէս հորիզոնը կը փախ



չի իր ետեւէն վազող աղուն առջեւէն :

Վերջապէս դու քու դահէդ իջար և արքայապէս երկրիս վրայ կը քայլես :

Եւ բոլոր ընտթիւնը յուսով կը դողայ լեռները կը հարթին , հովիտները քու քայլիցդ առջև կ'ընդարձակին , մարդագետիններու քաղցրաբոյր ծաղիկներն քու քայլիցդ ներքև կը թափթփին :

Ովկիանոսը ահօս շինելու համար ալիքները կը բանայ որ անտի անցանես , մինչև անգամ աւազի հատեր տեղափոխութեան հրաման մը կամ հայեցուածք մը ընդունելու յուսով քու ետեւդ կը շրջին :

Ս.յ՛, ամեն ինչ կը կերպարանափոխի :

Վերջապէս դու մարդուն մէջ և երկրի վրայ ներկայ ես : Նա զքեզ յինքն , իրմէ դուրս և իւր շուրջը կ'զգայ :

Չքեզ կը ճանչնայ յինքն , զքեզ կ'ըմբռնէ , զքեզ կը հասկնայ , քեզ կը թափանցէ , ի քեզ կը մարմնանայ , ի քեզ վանճն կը սիրէ , կ'ապրի , կը բարախէ , կը խորհի և քեզմով կը մեռնի :

Վերջապէս դու անոր կը վերաբերիս և նա ամբողջ ի քեզ է :



Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Յ

Ճ

Տէր , գովեալ եղիր և օրհնէ քու դործաւորդ որ իւր բոլոր եղբայրները քեզմով կը սիրէ և թէ զանոնք կը սիրէ ինչպէս որ դու կ'ուզես որ քեզ սիրեն : Յամենայն հողւոյ և յամենայն մարմնէ :

Չ'կ'ոյ յիս երակ մը որ քեզ չ'զգայ : Ես ի քեզ կ'ընկղմիմ և երբ մեռնիմ չը պիտի գտնուի բան մը յիս որ քեզ չը պատկանի : Երբ մեռնիմ , պիտի ծնանիմ և բոլորովին քու դործդ պիտի ըլլամ :

Տէր , քու արգանդիդ մէջ սնն զիս լուսով , սիրով և բանավարութեամբ , որպէս զի քեզ արժանի որդի ծնիմ , որպէս զի քու բարձրութեանդ ելնելով կարողանամ զքեզ փառաբանել , ինչպէս որ արժանի ես և որոյ նման ինձմէ առաջ ոչ մէկ մարդկային էակ մը փառաբանած է :



Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Ս

ԺԱ

Տէր, ինչո՞ւ արարածն իւր սեփական զօրութեանցը թողած ես :

Ինչո՞ւ դու ինքդինքդ իւր աչքէն, իւր բանաւարութենէն կը պահես, ինչո՞ւ դէպքերով կը ներես որ նա քու վրադ տարակուսի :

Աւելի աղէկ չ'ըլլար ինքդինքդ ամբողջապէս մարդուն ցուցնել քան թէ էութեանդ մէկ սերմը իւր ծոցին մէջ դնել և սիրեալ սիրահարի մը պէս անոր առջևէն փախչիլ, վախնալով որ իւր ներկայութեամբը իրեն պատշաճ եղած պատիւը կը կորսնցնէ :

Պէտք է որ այս գիծը գծող ձեռնը փրտտի : Պէտք է որ միտքս ի քեզ հասնելու համար տարակուսանաց ծովէ մ'անցնի :

Կեանքը լոկ հետազօտութեանց վիճակ մը պիտի ըլլայ առանց որ և է ստուգութեան հասնելու :

Նախանձոտի մը պէս միտքը գտնել չ'ուզած բանը պիտի փնտռէ :

Տէր, եթէ դու յիս կ'ապրիս, պարտիս զգալ իմ զգացած վիշտերս :

Երբ խանդաղատանօք, եռանդով, ես ի քեզ խոյանամ, դու ինձմէ խոյս կը տաս . ինչպէս օդը ձեռքով զգացուիլ ուզուած ատեն կը խուսափի :

Իրիկունը անկողնոյս սնարն մարմինս ի քուն տալէ առաջ կ'ուզեմ քեզ ինձ ստանալ զայս ըսելով . « Ո՛ հայր, պիտի ննջեմ, հսկէ իմ վերայ » :

Կը ննջեմ : Կը հսկես : Զքեզ չ'եմ զգար : Առաւօտուն երբ զարթնում կը թուի ինձ թէ դու աչացս առջևէն կը փախչիս : Կը վազեմ, թեւեր կ'առնում, օդը կը ձեղքեմ, կ'ելեքարկանանամ, ո՛չ ևս քու ներկայութեանդ հետքը կը տեսնուի :

Բայց սակայն քանի՞ քանի անգամ ճշմարիտ վտանգներէ ազատեցայ իբրև սքանչելեօք :

Տէր, երբ ուրեմն քեզ պիտի տեսնեմ : Ե՞րբ ուրեմն պիտի կարողանամ ծնրադրել քու առջևդ և կրկնակի համբոյրներով քու լոյսէդ նշոյլ մը ծծել :

Անկարելի է որ ես քեզ տեսնալու հա-



մար, պարտաւորիմ մեռնիլ, որովհետեւ անձս  
անձնասպանութեան դատապարտել ըսել է :

Անկարելի է որ դու մահը վարագոյրի  
բարձու մը ըրած ըլլաս :

Աւելի աղէկ էր մեռնիլ քան թէ ծնիլ :

Եթէ կեանքը մթութիւն մ'է, անիծեալ  
ըլլայ : Անիծեալ ըլլայ յանուն քո :

Անոնք որ ի կենդանւոյն զքեզ չեն տե-  
սած, մեռեալ զքեզ պիտի տեսնեն :

Երկերը զքեզ կը տեսնէ :

Երբ դու զայն կը գորդես, նա քու կա-  
րողութիւնդ կ'զգայ. ասի խոստովանիմ,  
բայց զքեզ տեսնելը, իբրև զքեզ լինել է :

Քեզ տեսնել ինքզինքը տեսնել է :

Եթէ դու կաս, յիս ես և ես զքեզ յիս  
կը տեսնեմ : Ապա թէ ոչ ոնք պիտի ըլլաս դու :

Երկի՞նքը. ամբողջ հաստատութիւնը հո-  
գի մը կարժէ :

Արեգակը որ տիեզերաց լոյս կը տայ,  
կարող չ'է իւր ճառագայթներով հոգի մը  
և անոր արտայայտութիւնը լուսանկարել :

Արհեստաւորին շինած արձանը իւր տէ-  
րը կը տեսնայ :

Սակայն և այնպէս արձանագործը զայն  
չը քանդակէր և զայն խորշի մը մէջ չը գնէր

քան եթէ անոր համար որ անցորդաց իւր  
տիրոջ փառքը և անունը յայտնէ :

Եթէ արձանը մերժէր այս ծառայու-  
թիւնը, այն ատեն ո՛չ միայն նա պիտի հին-  
նար և իւր գեղեցկութիւնը կորսնցնէր, այլ  
հեղինակը զայն ցեխի մէջ պիտի նետէր և  
սանակովս պիտի ընէր :

Երիտասարդութեան ատեն ստեղծուած  
աստուածային արձան մ'եմ քու փառքդ  
ըսելու համար և որ դու քեմէ հեռու ձը-  
գես զայն երբ ծերանայ :

Ուրեմն որոնք ըսեմք զայդ : Դու հաւա-  
սար չ'ունիս որ անոր ըսեմ :

Բայց այն արձանը չը բանավարէր : Ան-  
շուշտ իւր ձեռովը կը խօսի բայց չը վիճարա-  
նէր : Նա իւր ստեղծչին բանավարութենէն  
նշջլ մ'ունի :

Դու ի քեզ տարակուսելու աղատութիւ-  
նը տուած ես ինձ : Այլ աւելի բան մ'ալ :  
Ես յիս արդարութեան գաղափարական մը  
կը կրեմ որու քու գործքերդ բնաւ չ'են  
հասնիր :

Քանիցս ես կը սփռամ. « Եթէ աշխարհը  
ստեղծելու ըլլայի ալ աւելի աղէկ պիտի շի-  
նէի » :



Արդեօք զայս իմ բերնովս ըսողը դարձեալ դո՞ւ ես : Արդեօք քու գործքիդ վրայ դժգոհ ես :

Ուրեմն մենք անբաժանելի եմք : Դու յիս մարմնացած ես : Ես միանդամայն ստեղծիչ և արարած եմ :

Եւ երբ մեռնիմ, այն ատեն մարմինս բնութեանդ օրինաց պիտի թողուս, սա պայմանաւ որ զիս վերջը դոնեւս :

Ուրեմն կեանքը աստուածային ամուսնութիւն մ'է : Մահը վայրկենական բաժանում մը և քիմիական պատրաստութիւն մ'է նոր խնամութեան մը համար :

Եւ զայս դու ԼԻՆՆԻ, ՍՊԻԼ և ՍՏԵՂՄԵԼ կը կոչես : Դու կաս, կ'ապրիս, կ'զգաս, մարդուն մէջ կ'ստեղծես :

Եւ մահուամբ դու միշտ լինելու, անդադար ապրելու, և մշտնջենաւորապէս ստեղծելու կարելիութիւնը հնարած ես :

Եթէ ես չը ծերանայի, դու միշտ երիտասարդ չ'էիր լինէր :

Եւ եթէ ես չը մեռնէի դու անմահ չ'էիր ըլլար : Ո՛՛ Տէր, մի փախիր :

Այս վայրկենիս մէջ զքեզ կը տեսնեմ, զքեզ կ'զգամ, և քեզ յիս ունիմ : Երջանիկ եմ :

Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Մ

ԺԲ

Տէր, սրտիս շերմութիւնը, բանավարութեանս աստղն ես. ինչո՞ւ կը ներես որ ոտք կոխեմ սխաղանաց մութ ու պաղ ճամբուն վրայ :

Եթէ դու յիս կը սիրիս, ինչո՞ւ իմ կեանքըս երկու մասերու բաժնեցիր, որոյ հատուածները կը ջանան միանալ, բայց ի զո՞ւր :

Ինչո՞ւ ճշմարտութեան տենջալով և քեզի հետեւելով, մագնիսին ետեւէն ընթացող երկաթին պէս, միշտ շեղած եմ ձախ և յաջ խարխափելով, երիտասարդութիւնս, միտքս և զօրութիւնս վատնելով :

Ինչո՞ւ բանավարութիւնս գիծեր չ'ունի, որոյ վրայ յառաջանայ առանց երեւակայութեան կոր գծերուն վրայէն մտորելու :

Ինչո՞ւ ճշմարտութիւնը որ ելեքարիկի պէս կը գործէ, գաղափարին հասնելէն ա-



ուաջ չ'ընդմիջուելու համար իր թեւը չ'ու-  
նենայ :

Ինչո՞ւ միաքը մեր սիրտը չը լուսաւորէր :  
Ինչո՞ւ համար լոյսը թող կը տայ ինքզինքը  
որ մթազնի զգացողութեան փոթորկալից  
եռանդէն :

Գու յիս միշտ կը մրցիս ի դլասս ինձ :

Ինձ կ'ըսէին թէ դու իմ աչառ կամքս  
ինձ թողած էիր, թէ դու իմ սխալանացս  
մէջ ամենեւին մասնակցութիւն մը չ'ունիս :

Բայց և այնպէս դու որ զքեզ յիս կը  
տեսնես, դու գիտես զայն :

Իրբէք ուրիշ նպատակ, ուրիշ տենջ, ու-  
րիշ դիտաւորութիւն ունեցած չ'եմ բաց ի  
կամացդ համեմատ գործելէ, քեզի հաճելի  
լինելու և քու օրէնքդ լրացնելու համար :

Ս.յն ատենէն ի վեր որ կը խորհիմ և  
որ բանավարութիւնս արեանս հոսիը կը նը-  
կատէ, խղճմտանքիս մէջ քեզ գոհացնել է  
նպատակս :

Կ'ըսեմ ես ինձ. « Տէրը հոն է. մնիս մէջ  
կը բաբախէ, երակացս մէջ կը շըջի, մտաց  
փայլի մը մէջ երբեմն կը փայլատակէ :

« Ս.յն, նա յիս է և ո՛չ իւր ամբողջու-  
թեան մէջ, զի նա կը պարտի նոյնպէս ապ-

րիլ յեղբայր իմ. եղբորս ներկայութենէն  
կրնամ խոյս տալ, բայց չ'եմ կարող հողւոյս  
մէջ ստեղծիչ Տիրոջը ներկայութենէն խու-  
սափիլ » :

Բոլոր իմ խորհուրդս, գործս և կեանքս  
ուրիշ նպատակ չ'ունէր, քան եթէ խղճմը-  
տանքիս մէջ քու դէմքէդ ժպիտ մը խլել :

Եթէ ատոր չը յաջողեցայ նէ յանցանքը  
իմն էր :

Ս.զմտ էի ես երբ իմ աղօտալոյս բանա-  
վարութիւնս ինձ բարի ճամբայ չ'էր ցուցնէր :

Ս.զմտ էի երբ փորձառութիւն և գի-  
տութիւն չ'ունենալուս՝ մարդոց իրենց իրա-  
ւանց սրբութիւնը կը քարոզէի յառաջ քան  
զանոնք յորդորելու որ իրենց ամենէն նուի-  
րական պարտաւորութիւնները կատարեն :

Ս.զմտ էի երբ սիրտս զիս թշնամեացդ  
բանակին մէջ կը մղէր և թէ բանավարու-  
թիւնը շատ ուշ կը ցուցնէր իրենց կրօնքը որ  
ասելովէն կը կոչուի և իրենց աստուածն որ  
ասելովէն կ'անուանուի :

Ո՛չ, դու չ'ես կարող մեղադրել սիրտս  
որ զքեզ սիրելով միայն փափաք մը ունե-  
ցած է, այն է՝ սիրուիլ ի քէն :

Եթէ մեր երկուքէն մէկը գանդատելու



իրաւունք ունի, առաւել ես քէնէ կը պարտիմ գանդատիլ և ոչ դու յինէն :

Դու իմ կեանքս կաշկանդեցիր, դու ինձ մեկնիլ տուիր յայնպիսի կէտէ մ'ուրկէ աւելի փորձառու ետ դարձայ, բայց յողնած, սպառեալ, տգիտութեան և սըլաւման աղջամղջին պտոյտներուն մէջ մոլորեւիս յետոյ :

Դու զիս մերձաւորացս աչքէն հանեցիր, ըսելով թէ ոչ բնաւորութիւն, ոչ հաստատութիւն, ոչ բանավարութիւն և ոչ կամք ունիմք :

Վասն զի ես միշտ իրենց դովեստներէն, կարծիքներէն, իրենց յարգանքներէն, և վարձքերէն հրաժարած եմ :

Վասն զի միակ ջանքս քեզ հաճելի լինել և անքունութեան դիշերներու մէջէն ու սխալանաց գահալէժ ճամբոց եզրէն քեզ միանալ է :

Քեզ նուիրեցի, Տէր, իմ բոլոր սիրտս, միտքս, հոգիս և դու զիս ամբողջապէս ընդունեցիր :

Ինէ բան մը չը մնաց իմ ընկերացս համար :

Չըկայ յիս ոչ բաղխում մը, ոչ երակ մը

որ չ'ըսէ « զգացի, դողացի, ստեղծիչ Սրարչիս համար ապրեցայ » :

Քեզ զոհեցի անունս և մինչեւ իսկ ապագայս :

Եթէ ինէ ետքը ապրիմ, ի քեզ պիտի լինի և միայն ի քեզ :

Բայց դու կ'ուզես արդար եղիր, կ'ուզես անիրաւ, կ'ուզես զթասիրտ կամ անգութ ինձ համար, և եթէ կենաց մէջ եղած ամեն բան և կեանքն իսկ դու ինէ վերցնես ամենեւին չեմ գանդատիր :

Ազատ կամ ոչ, ես զայն ուզեցի Տէր, զի անձէս աւելի քեզ կը սիրեմ, զի միակ քեզ մով անձս կը սիրեմ :

Փոյթ չ'է որ իմ ներսիդիս եղող քու անձրդ է որ զքեզ կը սիրէ :

Դու իմ հոգիս ստեղծելով յիս պաշտուելու համար տաճար մը բարձրացուցիր քանի որ ես կապրիմ :

. . . . .





Անտառաց և մարդագետիններու գեղեցկաշունչ բոյրերը մինչ ցարբենալ շնչած եմ:

Ամենասիրելոյս համբոյրներէն հեշտութեամբ սարսուած եմ: Երակներս նուազածուութեան ներդաշնակաւոր ձայներու հիացմամբ ելեքտրականացեալ և ուռեցած են:

Բայց բան մը իմաստունին ժպտին և արգարին դիմաց հայեցուածոյն երջանկութեան հետ կարող չ'է բաղդատուիլ:

Ո՛ր Տէր, արդարին դէմքը քու լոյսդ կը ցոլացնէ և իմաստնոյն ժպտին մէջ քու լոյսըդ կը փայլի: Տէր, դու ճշմարտութիւն, գեղեցկութիւն, արդարութիւն և սէր ես:

Եւ ինչ որ երկրիս վրայ ճշմարիտը, գեղեցիկը, արդարը, բարին և սիրելին կը յիշեցնէ դու ես մարդուն մէջ:

Արդարը Աստուած մ'է որ կը մեռնի:  
Եւ Աստուած արդար մ'է որ կը յառնէ:

Ո՛ր Տէր, ինչ որ ալ լինիս, քու մեծանձնութիւնդ մարդուն նկատմամբ անչափելի է:

Ո՛չ միայն թէ դու զայն հողէն ստեղծեցիր, այլ զայն քեզ նման ընելով, դէպ ի քեզ ամեն երախտագիտութենէ ազատ կացուցիր:

Իւր բանավարութեամբ՝ որ բոլորովին քենէ բաղկացեալ է, կրնայ քեզ ուրանալ, քեզ լքանել և անիծել իսկ:

Երբէք քու մեծութեանդ մէջ քու որդիէդ վրէժ առած չ'ես քեզի չը հնազանդելուն համար:

Երբէք զքեզ շողոքորթելուն համար ալ վարձատրած չ'ես զանի:

Դու կը սիրես մարդն այն սիրուն համար որ իւր եղբոր համար կ'զգայ:

Դու զանի իւր անիրաւութեանը համար կը պատժես, որ աստուածային գործն եզող



իւր մօտն եղողին կ'ընէ :

Այն անձը որ յանուն քո և քեզ հաճելի լինելու համար իւր նմանեաց ամենափոքր չարիք մը կ'ընէ , անկէ աւելի թշուառ մէկը չըլայ :

Յանուն քո սէր , բարիք և գեղեցկութիւն կայ միայն :

Տէր , այն որ քեզ կը շողոքորթէ գրեզ չը ճանչնար բնաւ :

Իւր ատելութիւնները և փոքրկութիւնները քեզ ալ կը սեպհականէ : Յաժ ձայնով կը խօսի որ չ'ըլլայ թէ իւր ձայնը լսուի :

Այն մարդը որ չը համարձակիր ժողովրդեան առջև քեզ խօսիլ , կըյուսայ որ իւր ցած շողոքորթութիւններուն փոխարէն դու նորա իրեն համար ինդրած բարիքը և թըշնամոյն համար աղերսած չարիքը պ'տի տաս :

Նա միայն աղօթած կ'ըլլայ , որ բարձր ձայնով կը կարդայ . որ քու արարածոյդ համար կ'աշխատի , նա՛ որ զոհողութեանց անձնուիրութեամբ և սիրով քեզ նմանիլ կը ջանայ :



Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Մ

ԺԵ

Մեզըը բերնին մէջ քաղցր է . շողոքորթութիւնը սրտին մէջ աւելի քաղցր . բայց կնոջ սէրէն աւելի չ'են սորա :

Ո՛րչափ գեղեցիկ է այրչալուսոյն առաջին ճառագայթները , կամ ամպի մը ետին մի և նոյն կեդրոնէ ելնող ծիրանին . բայց կուսի մը ժպիտը ասոնցմէ ալ աւելի գեղեցիկ է :

Որթին շուրը մարդուս սիրտը կը զովացրնէ . երկրիս մաքուր ցորենը իւր մարմինը կը զօրացնէ :

Իւր աչերը պատկերի մը մեծապայծառ գոյներէն կը բերկրին :

Իւր ականջներն , ներդաշնակաւ որ նուագարանի մը մարդարտանման ցօղը կը խմեն . բայց և ո՛չ ինչ բաղդատելի է այն երջանկութեան հետ որ մէկը իր սիրուհւոյն հոգին երկայն համբոյրով մը կը ծծէ :




Աղօթից հիացումը զգայուն սրտից ըն-  
տանի է :

Ստեղծիչ տիրոջ առջև երկրպագելու  
գերագոյն երջանկութիւնը ո՞վ զգացած չ'է,  
տղու մը իւր հօր վրայ ձգած ակնարկին պէս  
սիրով ցածէն բարձր զայն նկատելու համար :

Բայց ո՞չ երկնի, ո՞չ երկրի, ո՞չ եղած և  
ո՞չ ալ ըլլալիք ստեղծմանց մէջ եղած երջան-  
կութիւնը, սիրահարի մը իւր սիրուհւոյն  
ծնգանց առջև, աչք աչքի դէմ, ձեռն ի ձե-  
ռին, հոգին հոգւոյն մէջ քամուելով, ձայն  
ձայնի կցեալ Ինչ կը սիրէ՞ ըսելու երջանկու-  
թեան չը հաւասարիր :

Տէրն իսկ այս սէրն ու երջանկութիւնը  
մտածած և դտած է :



Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Մ

ԺԶ

Տէր, դու մարդկութեան հիւթն ես,  
արարչագործութեան զօրութիւնը, ամեն  
զգացող իրաց ծուծն, ամեն խորհող էակաց  
պատճառն և ամեն սիրող անձանց արիւնը :

Դու աշխարհիս ծեփը, կապը, հաւատ-  
քը և կեանքն ես :

Առանց քեզի մարդիկ ամայի անապատի  
մը մէջ արեգական տակ թափառող ճիւղ-  
ներու ստուերներ պիտի լինէին :

Եթէ լոյսդ ցոլացնող մարդը չ'ըլլար,  
բնութիւնն անկարգ, աններդաշնակ, անծա-  
ղիկ և անպտուղ քաօս մը պիտի լինէր :

Նոյն իսկ արեգակն առանց մարդու ի՞նչ  
կ'ըլլար, որու մէջ քու բանավարութիւնդ կը  
յայտնուի, կը վերանորոգուի, կը փայլի և  
կ'անմահանայ :

Աւագէ չորացուցման տեղի մը և քաօսի



լրտես մը պիտի լինէր :

Օրը առանց քու բանավարութեանդ դունափոխ գիշեր մ'է :

Տէր , քու շնորհիւդ , ընդհանուր մարդկութիւնը մարմին մը , գիտութեան և կենաց անհուն ծառ մը կը կազմէ :

Մարդս միայն գիտութեան կարող եղած է հասնիլ . բայց մարդկութիւնը մշտնջենական կենաց հասած է :

Ի՞նչ փոյթ որ մէկը այս աստուածային ծառին արմատ , ոստ , կոճղ , ճիւղ , բողբոջ , ծաղիկ , տերև կամ պտուղ եղած ըլլայ :

Արմատը հողին տակ առանց ազատութեան , առանց օդոյ և անտես վիճակի մէջ ըլլալէն գանգատելու իրաւունք չ'ունի . ինչպէս ծաղիկը գազաթին վրայ՝ որ երէկ կը փայլէր այսօր թառամած է և վաղը պիտի իյնայ ու գարձեալ իւր կեանքը նոյն արմատին պիտի տայ :

Արմատ , կոճղ , ճիւղ , բողբոջ , տերև և ծաղիկ բոլորն ալ ներքնականապէս Մտեցնելն անհուն հիւթին հետ կապուած են , ամենքն ալ ձև և պաշտօն կը փոխեն ու կը փոխանակեն , ամենքն ալ մի և նոյն պարտքերն ունին իրենց կրած պաշտօններուն և մի և


նոյն իրաւունքը՝ իրենց ստանձնեալ տեղաց համեմատ :

Արմատը միշտ կոճղ ըլլալու հակամետ է , կոճղը ճիւղեր , ճիւղը տերեւներ ըլլալու և տերեւներն իբր ծաղիկ փթթելու և ծաղիկն ալ պտուղ կազմուելու :

Շնորհակալ եմ քե՛նէ՛ս՝ ի՛նչ որ դիս ըստեղծեցիր :

Թէեւ մարդկութեան ծառոյն անյայտ մէկ արմատաճիւղն ալ որ ըլլամ , քու ծաղկանցդ հիւթը պիտի ծծեմ , և կրակէ տոգորեալ արքեցուցիչ տերեւներուն ծուծէն երջանկութեանս ծարաւը պիտի յագեցնեմ , և ես ինքս աստուածային հեղուկ մարմին մ'ըլլալով ժամանակին հետ ի միասին ծառոյն սպիտակուցին մէջէն մինչեւ այն դագաթը պիտի ելնեմ որ լուսաչող քու սիրոյ և բանավարութեան էակիդ կը հասնի :

Տէր , դու մինչ ի մարդ կ'իջնես :  
Վաղ կամ անադան մարդը մինչ ի քեզ պիտի ելնէ :





Տէր, ո՞ որ զքեզ տեսնէ, ո՞ որ քեզ այլ ուր տեսած է, չ'է թէ ի բանավարութեան կամ բանավարութեան միջոցաւ, զքեզ տեսած կ'ըլլայ ի յիմարութեան և յիմարութեան միջոցաւ :

Բանավարութենէ դուրս եղած ամեն հաւատք, յիմարութեան արդիւնք մ'է :

Այն բանը որ իւր ամբողջ պարզութեանը մէջ բանավարութիւնը չը ցուցնէր, տրիւրազգեաց ուրուական մը, գիշերուան անկարգութեան և մտաց շեղման արդիւնք մ'է :

Բանավարութեան համար բան մը դիպուածական չ'է :

Ամեն բան կարեւոր տրամաբանութեամբ մ'եղած է :

Պատճառն կ'արտադրէ զարդիւնս և արդիւնքն ինքնին կը լինի պատճառ :

Հաւատացողներուն համար ամեն բան հրաշալի և գերբնական են :

Յիմարը ո՞չ իւր ներկայն և ո՞չ ալ ապագայն կը տեսնէ :

Իւր իրաւունքը չը ճանչար :

Լոյսը զայն կը շլացնէ, գիշերն իւր արեւն է, չարը իւր բարին, ատելութիւնը իւր սէրը :

Խենդն ու հաւատացեալը բացարձակօրէն կը գործեն. գիտեն ինչ որ կ'ատեն և սիրուելու բաները երբէք չ'են գիտեր :

Խենդը բարեկամ կը ճանչնայ անոնք՝ որ զինքը կը պաշտեն իբրև նոյն իսկ հանճար :

Հաւատացեալը չը ճանչնար ուրիշ հաւատք քան եթէ այն՝ զոր կը պաշտէ իբրև իւր Աստուածը :

Անհոգիւրդ վարդապետութիւնը ճշմարիտ հաւատացեալներ չ'ունի :

Ծառայներ ունի որք զայն կը գործածեն ի վնաս տղայոց, խօթամիտ անձանց, և ի նպատտ իրենց ցեղական շահերուն :

Տէր, դու քու բանավարութիւնդ փառաւորելու համար, չ'եսներեր և չը ներեցիր այս յիմարութեանց ինչպէս դու ստեղծեցիր գիշերը, ցորեկն զմայլելի ընելու և չարիք թոյլ կը տաս բարիքը սիրելի հանդիսա-



ցընելու համար :

Բացասութեան մէջն իսկ դու քու խո-  
թեանդ ապացոյցը դրած ես :

Յիմարը ինքնին բանավարութեան հաս-  
տատութիւնն է, ինչպէս ժամանակը յաւի-  
տենականութիւն կ'ենթադրէ, ինչպէս միջոցը  
անհունութիւն կը ցուցնէ և ինչպէս մահը  
վերջապէս անմահականութիւն կ'ապացու-  
ցանէ :



Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Ն

ԺԸ

Ո՛չ, երկինք քու փառքդ չ'են պատմեր  
և երկիրս քու մեծութիւնդ չը խօսիր :

Ո՛չ գարունը իւր խարտեաչ թարմու-  
թեամբ, ո՛չ ամառը իւր հրեղէն գեղեցկու-  
թեամբ, ո՛չ աշունը իւր ոսկեղօծ հունձքե-  
րով և ո՛չ ալ ձմեռը ճերմակ ձիւնէ գմբեթ-  
ներովն քեզ չ'են հրատարակեր, ո՛ր Տէր, և  
ոչ ալ արարած ու ստեղծիչ էակի մը ար-  
գարութիւնը, բարութիւնն ու սէրը կայ  
կ'ըսեն :

Ովկիանոսն ի զո՛ւր կը զայրանայ և լեռա-  
նակուտակ ալիներ կը հանէ, մրրիկն իւր  
փոթորիկներով կրնայ խոտը, ծաղիկը, ծա-  
ռը, անտառը ամբողջապէս աւելել. ի զո՛ւր  
երկիրը բոցերու հեղհեղներ կը ժայթքէ և  
աշխարհս իւր անդունդներուն մէջ կը խո-  
րասուզէ. անհունութեան մէջ և ո՛չ ինչ, ո՛չ



արեն, ոչ լուսինը, ոչ ցերեկն և ոչ գիշերը,  
բան մը չը կայ թէ Աստուծոյ լինելն արտա-  
սանէ :

Միակ մարդը խօսքով կ'ըսէ թէ դու կաս:  
Նա միակ իւր տէրը, իւր ստեղծիչը կը  
հրատարակէ :

Նա միակ գերագոյն էակին փառքը կը  
գեղգեղէ :

Եւ միակ դու զայն ստեղծած ես, քու  
գոյութեանդ վկայն ընելու համար :

Եւ դու զայն քու պատկերիդ համեմատ  
ստեղծած ես, նորա տալով բանավարութիւն  
և քեզ տարակուսելու ազատութիւն :

Որչափ մարդս մրցման մէջ հզօր է, որ-  
չափ պատերազմի մէջ աւելի աղնիւ զօրու-  
թիւններ կը ցուցնէ, նոյնչափ ալ բանավա-  
րութեան տէր է. որչափ որ դու զայն կը  
սիրես, այնչափ աւելի դու նորա կը ներես:

Ձի բանավարութեան մէջ դու ես, ո՛  
Տէր, որ քեզ գէմ կը մրցիս :

Դու շարժում և կեանք, խորհուրդ և  
բան, ներգաշնակութիւն և գեղգեղանք ես,  
ամեն բան որ է մեծ, գեղեցիկ և բարի դու ես:

Փառք քեզ որ ստեղծած ես մարդը :

Փառք մարդկանց որ զքեզ իրենց արա-

րիչ հրատարակած են :

Գործաւորը գործ մը կը շինէ որպէս զի  
գործն զգործաւորը փառաւորէ :

Բնութիւնն ամբողջ մարդով կը գոյանայ:  
Հողմը որ կը փչէ, ծովը որ կը մռնջէ,  
իրենց ձայնը մարդուն ականջովը կը լսուի :

Որչափ ալ գեղեցիկ ըլլայ ծաղիկն, որ-  
չափ շնորհալի ըլլայ վիթը, որչափ անուշա-  
հոտ ըլլայ խոտն, մարդկային բանավարու-  
թեան նշոյլովը են :

Բնութիւնը հայելի մ'է ուր մարդուն  
միտքը կը փայլի, և մարդուս միտքը բիւրեղ  
մ'է որու մէջ ստեղծիչ էակը կը տեսնուի :

Երբ Արարիչն ստեղծել ուզեց, ըսաւ.—  
մարդն ստեղծենք, և զայն մեր պատկերին  
համեմատ ստեղծենք :

Մարդը անմահ է՝ եթէ իւր Արարիչն ան-  
մահ է : Եւ բնութիւնը յաւիտենական է՝  
եթէ մարդս չը մեռնի :

Բայց մարդս բանավարութեան կաթիլէն  
և երկրային ցեխէն զանդեալ և ըսենք աստ-  
ուածային ցօղէ զանգեալ, չափազանց և կա-  
րի յոյժ կը խոնարհի յերկիր :

Անհունութիւնը հունաւորին թալկաւոր  
շողիներովը կը շփոթի :



Նիւթը կ'երնէ , ջրհեղեղի ալիւ մը պէս ,  
միտքը կ'ընկզմէ և զայն անձնասիրութեան  
և յիմարութեան տղմուտ կաւին մէջ կը քարշէ :

Այո՛ , կան բնութենէն լքեալ խեղճ անձինք :  
Ասոնք ո՛չ աղքատ , ո՛չ հիւանդ և ո՛չ հաշ-  
մանդամ , այլ ասոնք աստուածային գաղա-  
փարականէ զուրկ անձինք են :

Իրենց գլուխը առանց այս երկնային  
լոյսը եղող բանավարութեան՝ տխուր գըն-  
տակ մ'է :

Եւ իրենց հոգին իրենց քով փայլուն ե-  
ղողներն դուրս ցոլացնելու համար մթին  
սենեակ մը :

Գործաւոր մը որչափ ալ ուժեղ որ ըլլայ  
իր գործոց բոլորն ալ իրարու չ'են նմանիր :

Արարիչն որչափ որ ալ մեծ լինի իւր ա-  
րարածներն մի և նոյն կարգը չ'են բռներ :

Մի և նոյն ստեղծիչն է որ զանոնք ըս-  
տեղծեց , բայց մէկուն լուսոյ վառարան մը  
տուաւ , իսկ միւսին լոկ նշոյլ մը :

Այս ինչը աստուածային ճառագայթից  
որայ մ'ունի , այն ինչը հասկ մը միայն :

Այն բանը որ մարդուն վրայ անձնասի-  
րութիւն է , կնոջ վրայ մեծարանք կը լինի :

Կնոջ համար զոհողութիւնը՝ վայելչու-

թիւն և անձնուիրութիւնը երջանկութիւն է :

Ի՞նչ է այն գեղեցկութիւնը որ կանանց  
գեղեցկութեան հակառակ երկրիս վրայ և  
երկնի մէջ անշունչ և կենդանի էակներէն  
միացեալ է :

Ի՞նչ է արշալոյսի զովութիւնը , վարդին  
փայլը , մարդադեմնին դրակոնտիկոնը , աղ-  
բիւրին պայծառութիւնը , երկնից կապու-  
տակը և մինչև անգամ անտառաց մթին լոյ-  
սը , գաղափարականէ լուսաւորեալ ճակա-  
տօք , անհունութեան մէջ լողացող հայեց-  
ուածօք կուսի մը առջև , որոյ սիգածեմ՝ քալ-  
ուածքը , միայն Աստուծոյ աղջիկ մը , իւր  
սիրելի արարածը , իր նախապատիւ սիրոյն  
գործը , բոլոր գաղափարականապէս գեղե-  
ցիկ եղող իրերուն , բոլոր մշտնջենաւորապէս  
բարի եղողներուն և բոլոր աստուածապէս  
մեծ եղողներուն բովանդակութիւնը ըլլալը  
կը յայտնէ :

Տեսէք կը կենայ իւր պարկեշտ և քող-  
արկեալ աչերը ի բարձունս յառելով :

Բնութիւնն ինքնին կարծես թէ իւր օ-  
րէնքները խզելով՝ իւր տիրուհւոյն դիւթիչ  
կամացը ուրախութեամբ կը հպատակի և բո-  
լոր իւր հրապոյրները կ'զգենու ի պատիւ :



Փոթորիկն իսկ կարծես իւր տարօրինակ սաստկութեամբը, ամբողջ բնութեան բոլոր պսակներէն, բոլոր թագերէն գեղեցիկ եղող իւր վարսերը գդուելու համար զեփիւռ կը խրկէ և մեծ փշումներն յինքն կը ձգէ :

Նոյն իսկ այնչափ անզուսպ Ուկիւննոսն իւր ներդաշնակաւոր ալեաց վրայ զայն ճօճել հրաւիրելու համար իւր խորդ ու բորդ մակերեւոյթը կը հարթէ :

Նոյն ինքն հրեշտակք, այս գաղափարապանին պատգամաբերները, իրենց տիրոջ նախապատիւ սիրոյն արարածէն սիրոյ ակնարկ մը խլելու համար իրենց օգեղէն կառքերէն կարծես թէ կ'իջնեն :

Եւ այս կինը որ գեղեցկաց գեղեցիկը, կարողաց կարողը, հեշտալեաց հեշտալին է, այս կինը կ'ըսեմ, հազիւ զինքը պատողնեւրուն, հայցողներուն, երկրպագողներուն վրայ ակնարկ մը կը ձգէ :

« Ետ թող քաշուին երկիրն և իւր ունայնութիւնները, կըսէ :

« Ետ թող քաշուին նիւթն և իւր կախարդանքը, հեշտութիւնն և իւր խայթուածները :

« Ետ թող քաշուին սնտոսի մեծութիւն

ները, պատիւներն և ամեն անոնք որ պարսպ, վաղանցուկ և ոչինչ են :

« Էս, կին, անձնուրացութենէ, զոհողութենէ և անձնուիրութենէ ուրիշ բան ճանչնալ չ'եմ ուզեր :

« Իմ մեծութիւնս անհունութեան և զօրութիւնս ալ առաքինութեան մէջ է :

« Հեռի յինէն դուք ամենքնիդ, որ ձեր շնչովը նսեմացնելու և ձեր փշմամբը պղծելու համար իմ գեղեցկութեանս վրայ կը խօսիք :

« Առաքինութեան համար է նա :

« Քանի որ սէտք է իմ հարկս երկրային սիրոյ հատուցանել, միայն մարդ մը պիտի սիրեմ և իրեն հաւատարիմ պիտի ըլլամ :

« Հաւատարիմամուսին մնալով իմ պատկառանքս, այն է՝ միակ և ճշմարիտ կուսութիւնը՝ հոգւոյ կուսութիւնը պիտի պահեմ :

« Սէրը՝ ինձ համար հեշտութիւն մը չ'է, քան եթէ զաղափարական մարմնառութիւն մը, ատուածային համադոյափոխութիւն մը, որդւոցս հոգւոց մէջ հոգիս սփռելու պարտք մը, որպէս զի նորա ինքնին մարդկութեան անհունութեան մէջ լուծուին :

« Վասն զի մարդկութիւնը, աղատութեամբ, բանալարութեամբ և երջանկու



Թեամբ կը ծաւալի այն հոգւոց իւրաքանչիւրէն, որոնք իրենց աստուածային հիւթը հոն կ'աւանդեն և շիթ առ շիթ իրենց գաղափարականին արիւնը հոն կը հոսեցնեն :

« Առաքինութեամբ տկար կին մ'եմ, մարդուն կըքաց խաղալիքը, բայց իւր հաւասարն, առաւել ևս իւր գերազոյնը :

« Մէկ ոստմամբ անդնդոց խորէն, աստղալի երկնից բարձրերը կը խոյանամ :

« Բոլոր ցանկութենէ, պղծութենէ կոյս, ի հոգւոյ և ի մարմնէ մարուր կը կենամ :

« Առաքինութեամբ՝ այս սիրոյ գաղափարականով՝ հոգեւորեալ մարմին մը, գերբնական ձեւ մը, անհունութեան մէկ մասը, մեծ Գործաւորին մէկ ընտրեալ գործը, ըստեղծող և արարիչ էակին ոսկրէ և միսէ մէկ ապացոյցն կը լինիմ » :

Այսպէս ահա ոչ մէկ երջանկութիւն, երանութիւն, բանաստեղծութիւն և գոյութիւն առանց կնոջ չը կրնար կատարուիլ :



Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Մ

ԺԹ

Հաւատալը տեսնալ է :  
Արտաքին աչքը կը հաւատայ ինչ որ կը տեսնայ :

Ներքին աչքը, այն է՝ հոգին, կը տեսնայ ինչ բանի որ հաւատայ :

Բանավարութիւնը որ զգացում մ'է ի լոյս փոխակերպեալ, ո՛չ միայն կը տեսնէ այլ և զինքն կը տեսնէ :

Այս կրկնակի տեսչութենէն կ'սկսի, կը բաղդատէ, կը դատէ և կ'ապացուցանէ :

Ուրեմն ամեն բանավարութիւն բաղդատութիւն է :

Ամեն լոյս իւր յատուկ պայծառութեան նշոյլը կ'ենթադրէ :

Ամեն հաւատք՝ որ բանաւարութեան յիշողութիւնն չը տեսնէր սխալանք մը և կամ թէ ըստուեր մ'է :



Ամեն հաւատք՝ որ բաղդատութիւն չը ընդունիր, սխալ, կեղծ, պատիր և բռնաւորական է:

Տէր, այն որ յանուն քո զքեզ բանավարութեան վեր կը դնէ քեզ չը տեսնար, քեզ երբէք տեսած չ'է:

Քու տեղդ իւր էութիւնը միայն կ'զգայ: Երբէք բանավարութիւնը քու զգոյթութիւնդ կարող չ'է եղած ապացուցանել, վասն զի եթէ կարենար, քու յատուկ էութիւնդ ուրացած պիտի ըլլար:

Ինչ որ մէկը չը տեսնէր, կարող չ'է զայն այլոց ցուցնել:

Կրօնամոլ մը բանավարութեան և հոգւոյ կոյր մ'է, անասունէն քիչ մը վեր մարդկային էակ մը:

Եթէ իւր հոգին դեռ մատաղ է, կարելի է զայն բանավարութեամբ լուսաւորել և տեսնալու պարզեւը անոր հաղորդել. իսկ եթէ ծեր հոգւոյ տէր է և ոչ մէկ ջրվիժական անդամահատութիւն մը զայն պիտի կարենայ բժշկել:

Պէտք է որ լուսոյ և բանավարութեան մեծ կրակարանին մէջ միւսանդամ ձուլուելու համար մեռնի:

Կրօնամոլը չը սիրէր վասն զի չը տեսնէր: Ատելութիւնն ու գիշերը երկուորեակ քոյրեր են:

Մարդ ատող կ'ըլլայ վասն զի ինքզինքը չը տեսնէր: Եթէ զինքը տեսնելու ըլլար, եթէ ճանչնար ինքզինքը, չը պիտի ատէր:

Սիրել իւր նմանեացը մէկուն բանավարութեանը վրայ բանավարութեան միջոցաւ ինքզինքը տեսնել է:

Ուրեմն զինքն յԱստուած տեսնել է:

Սիրել և զմայրիւր ընկերին հոգին տեսնել և դատել է. հրդեհի մը մէջ լուսոյ մը պէս իւր պայծառութեան մէջ կորսուիլ է:

Եթէ գիշերը կարողանար լոյսը տեսնել, անոր վրայ պիտի սքանչանար և անոր հետ պիտի խառնուէր:

Բանավարութիւնը ճանչցող կրօնամոլ մը, լոյսը հարեւանցի կերպով նկատող սգաստուեր մէկն է:

Երկրիս վրայ աւելի մեծ երջանկութիւն մը չը կայ:

Վարդապետական մոլեռանդութեամբ առաջնորդեալ բանավարական մարդ մը, իրեն համար մեռելատիպ ժպիտ մ'ունի, նըման այն լուսոյ ճառագայթին՝ այն վայրկե



նին՝ ուր գիշերը տեղի կը տայ իրեն :

Եթէ իւր բանավարութեան համար մեռնի , վերջնալոյսին յաջորդող լոյսն է , սիրով և պայծառութեամբ աւելի փայլուն յառնելու համար լոյս մը :

Տէր , շնորհակալ եմ որ զքեզ տեսնելու համար աչք , քու բանավարութիւն ըլլալդ ապացուցանելու համար փոքր ինչ բանավարութիւն , և իմ նմանեացս՝ որոյ շատերն ինձ մէ աւելի լու են՝ ամենքն ալ սիրելու համար բաւական խիղճ տուած ես :

Ձքեզ յիս կը տեսնեմ ու միակ քեզ կը հաւատամ : Այսպէս ոչ մոլեռանդական կուրութենէն և ոչ ալ տարակուսանաց մթութենէն կը վախնամ :

Որչափ որ զիս ատեն , դարձեալ ես չը պիտի ատեմ :

Թէ զիս սպաննեն , նոցա համա վերջնալոյսի Ժպիտ մը պիտի արձակեմ :

Քանի որ կենդանւոյն զքեզ կը տեսնեմ մեռած ատենս ալ աւելի զքեզ պիտի տեսնեմ :

Եթէ ի կենդանւոյն , իմ նմաններս ինձ պէս քեզ չը տեսան , յետ մահու քեզ պիտի տեսնենք և քեզ ի մեզ պիտի սիրենք :

*— 92 —*

Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Մ

Ի

Տէր , դու օրէնք ես , բոլորովին օրէնք , ոչ այլ ինչ բայց օրէնք :

Օրէնք և բանավարութիւն ի քեզ յար և նման են :

Ամեն ինչ որ կը գոյանայ , կ'ապրի և կը տևէ , այս բանավարութենէն , այս լոյսէն բղխում մ'է :

Մարդս երբէք օրէնք մը ստեղծել չէ կրցած :

Մարդս՝ որ բանավարութեանդ և օրինացդ մասնական երևոյթն է՝ չը կրնար ամբողջութեան մէջէն խոնարհ մաս մը խլելով զայն ձևակերպել :

Չը հնարէր , բան մը չը գտնէր , այլ կը յիշէ :

Եւ մինակ քու բանավարութենէդ ծնած օրէնքներն մարդասէր են , զի մինակ անոնք աստուածային են :



Այն բանը որ աստուածային չէ, մարդկային չ'է :

Այն՝ զոր բանավարութիւնը չը կրնար ընդունիլ ո՛չ մարդկային է և ո՛չ Աստուածային :

Այն՝ զոր բանավարութիւնը չը կրնար ընդունիլ, երբէք մարդոցմէ ընդհանրական կերպիւ չը պիտի ընդունուի :

Մինակ շահը, նիւթական կամ առաւելն առանձնաշնորհեալ ետութեան հպարտութիւնը կրնան բանավարութեան հակառակ վարդապետութիւններ և օրէնքներ դնել, բայց միայն վայրենական զօրութեամբ այն է՝ ռենակալութեամբ :

Անասնական զօրութիւնը, մարդու վրայ անհանճար նիւթ է : Չը տեէր :

Միտքը վաղ կամ անադան զայն արդարութեան կը կերպարանափոխէ :

Արդարութիւնը մարդկային բացասութիւնն է, բանավարութիւնը ապացուցանող աստուածային հաստատութիւնը :

Արդարութիւնը գէշը կը ցուցնէ և զայն կը պատժէ :

Բանավարութիւնը կը ցուցնէ բարին, սէրը, արարչագործութիւնը, զոհողութեամբ անձնուիրութիւնը :

Վերջապէս բանավարութիւնը, բարին, գեղեցիկը, սէրը Դու ես :

Բայց մարդս առանց Բացասիւն արդարութեան, հասարական սէրն երբէք տեսած չը պիտի լինէր :

Սուրբ և սիրեալ ըլլալէ առաջ արդար լինիլ պէտք է : Բարիք ընելէն առաջ պէտք է չարէն խորշիլ և զայն դատապարտելն ու պատժելը գիտնալ :

Քանի օրէնք, քանի վարդապետութիւնք քանի զօրութիւնք մարդկութեան մէջ դըրուած ու վերցուած են :

Մարդիկ զանոնք յաւիտենական հրատարակած էին :

Եւ զանոնք մարդկային արեամբ ձեփել կարծեցին :

Անոնք որ քու օրինացդ գաղտնիքը քու էութենէդ դողցան, պատմութեան մէջ կը կենան և միշտ պիտի կենան :

Այլք իրենց օրէնքներովն ու վարդապետութիւններովն անհետացան :

Անոնք մարդկութեան պարարտութիւն կ'ըլլան մինչեւ որ ժամանակին հետ ծաղկի և պտղոյ այլափոխին :

Օր մը օրէնքը ամեն մարդու վրայ և ա



մեն տեղ յանուն բանավարութեան պիտի իշխէ :

Այսուհետեւ զանազան օրէնքներ, վարդապետութիւններ, օրինագիրքեր, զանազան կրօնքներ, զանազան հերձուածներ, քահանայներ, անհամաձայնութիւններ, պատերազմներ, ժողովուրդներ, հայրենիքներ չը պիտի ըլլան :


Օրէնքն օրէնքի և ճարտարութիւնն ի զատ բան մը չը պիտի մնայ :

Բացասական մարդն, այն բանը որ չ'ուզէր թէ ուրիշն իրեն ընէ, ինքն ալ իւր նըմանեաց, իւր ընկերոջը չ'ընելով արդար պիտի ըլլայ :

Եւ հաստատական մարդն, այն որ իւր նմանեաց պիտի ընէ, առանց ազգայնութեան խտրութեան, ինքն ալ անոր ընելով սուրբ պիտի ըլլայ :

Սուրբէն և արդարէն վեր, որոնք մարդկութեան երկու դէմքերը են, միացման կէտի մը պէս օրէնք և բանավարութիւն պիտի ծածանի :

Եւ ասիկայ յառաջ պիտի բերէ կատարելութիւն :



Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Ս

ԻԱ



Տէր, դու քու յատուկ էութեանդ հրամանին անողորքելի կերպիւ հետեւող առաջին կարգի տրամաբանական օրէնք ես :

Այս օրինաց շնորհիւ ամեն ինչ կը փոխուի և ամեն ինչ կ'այլափոխի :

Այս օրինաց շնորհիւ աշխարհներ ծագած և անհետացած են :

Մարդկային սերունդներն Ովկիանոսի ալեաց նման կը բարձրանան, կը դառնան, կը բաղխին, և կը փշրին :

Որչանի աստղեր ճամբային և ծանրութեան օրէնքնին փոփոխած են :

Ոմանք ալ որ դեռ գոյացած չ'են, բոլորովին լուսափայլ հաստատութեանէն դուրս կ'ելնեն և լուսօք քու օրինացդ գծած երկնային ահօսները կ'ընթանան :

Տէր, դու ոչ միայն օրէնք ես, այլ այս



օրէնքը բոլորովին լոյս , բանավարուծիւն ,  
արգարուծիւն և գթութիւն է :

Խոտին շիւղէն սկսեալ մինչեւ գիսաւոր  
աստղը , փոքրիկ ճճիէն մինչեւ ծովային վիթ-  
խարի ձուկերն որ կը գոյանան , միակ այս օ-  
րինաց շնորհիւն է :

Բայց երկրի և երկնի ճշմարիտ երկակեն-  
ցաղ քու գլուխ-գործոցդ եղող մարդուն  
վրայ միակ , քու լոյսէդ մէկ քանի շող , ար-  
դարութենէդ մի քանի խորհուրդ , բանա-  
վարութենէդ մէկ քանի բիւրեղացեալ կա-  
թիլ , և քու սէրէդ քանի մը բաղխում թո-  
ղուցած ես որ իյնայ :

Դու այն յաւիտենական օրէնքն ես , ո-  
րոյ դու տրամաբանականապէս կը հետեւիս :

Այս օրինաց շնորհիւ , բարին ամեն տեղ  
բարիք կ'արտադրէ և չարիքն ալ միշտ չա-  
րիք կը ծնանի :

Ամեն պատճառ յղի է արդեամբ «  
...» — թող այնպէս լինի . — բայց յառաջ  
քան զամենայն քննու :

Այս արդիւնքը յայտնի լինելու համար ,  
երբեմն տարիներու , ժամանակաց , դարե-  
րու կ'սպասէ , բայց միշտ նոյն գերագոյն  
հրամանին շնորհիւ :

Բնական աշխարհին մէջ եղածին պէս ,  
բարոյական աշխարհին մէջ ալ կայ երրորդա-  
կան արդիւնքներ որ երրորդ սերնդեան վը-  
րայ կը յայտնուին , թէ բարւոյ և թէ չարի  
մասին :

Բարին և չարը անցելոյն մէջ կամ երկրին  
տակ ընդարձակ աննշմարելի արմատներ ու-  
նին :

Մարդիկ անոնց միայն բուները և ծա-  
ղիկներն , կամ փտտած բուները և անուշա-  
հոտ ծաղիկները կը տեսնեն :

Եւ ասոր վայրագութիւն կամ պարտի կը կո-  
չեն :

Ասիկայ օրինաց միջոցաւ առաջին կար-  
գի պատճառի մը տրամաբանական ար-  
դիւնքն է :

Տէր , դու չ'ես պատժեր , զի դու չ'ես  
ատեր :

Բայդ դու չ'ես ալ փոխեր օրինացդ է-  
ութիւնը , պատճառի մը արդիւնքը կասեց-  
նելու համար :

Բու արարածիդ հեծեծանքներն դաղ-  
րեցնելու համար աշխարհս իւր ծղխնիներէն  
դուրս չ'ես հաներ :

Եւ երբ հարց վրայ ձիւնէ , դու սողոց



վրայ իյնող ձեան կոյտը չ'ես կեցներ :

Թող և ոչ մի մահկանացու իր ճակատա-  
գրէն գանգատի :

Եթէ դժբաղդ է, թող իւր խղճմտանքը  
քննէ, թող իւր վրայ ակնարկ մը նետէ,  
թող տեսնէ թէ երիտասարդութենէն ի վեր,  
իւր սրտին մէջ իւր վշտին սերմը սերմանողը  
ինքը չ'է՞ արդեօք. թող բարւոյն օրինաց վե-  
րադառնայ, թող չարին պատճառը ջնջէ և  
արմատախիլ ընէ, և եթէ իրեն համար չա-  
փազանց ուշ է, այլ իւր եղբարց, իւր տղա-  
յոց և իւր նմանեաց համար շատ ուշ չ'է :

« Ինչո՞ւ համար ես իմ հօրս պատճառաւ  
ներդուիմ, կ'աղաղակէ մարդ :

« Ինչո՞ւ համար՝ վասն զի՞ ցոփակեաց  
էր. անիկայ ցոփ կեանք մը ունենալուն հա-  
մար իմ արեանս մէջ հիւանդութեան սերմը  
դրաւ : « Եթէ Աստուած արդար է, ինչո՞ւ  
այսպիսի անիրաւութեան կը ներէ » :

Վասն զի այն օրէնքը որոյ շնորհիւ դու  
կը գոյանաս, իւր անողքելի տրամաբանու-  
թիւնն ունի, կ'ուզէ բացառութեան համար  
լինի, կ'ուզէ հաստատութեան :

Վասն զի եթէ ի շնորհս քեզ այս օրէնքը  
դադրեցնէ, տիեզերական խառնակութիւն

մը պիտի ծնանէր որ քիչ մը տանջուող մար-  
դու մը տեղ միլեօնաւոր մարդիկ թշուառ  
պիտի լինէին :

Վասն զի բացատրութիւնը այնպէս իսկա-  
կանապէս կարեւոր է, ինչպէս մեծ ամբողջու-  
թեան ներդաշնակութեան հաստատութիւնը :

Անով է որ կարգը կը գոյանայ և օրէնքը  
կը արանայ :

Գիշերով է որ լոյսը կը ճանչցուի, տգեղն  
է որ գեղեցկին վայլ կը տայ, հունաւորն է  
որ ինքնին անհունութիւնը կը պարունակէ և  
զայն կը տեսնէ :

Չարն է որ տրամաբանական ստուերն է  
բարւոյն, մահուամբ է որ վերջապէս մարդս  
իւր անմահականութիւնը հրատարակած և  
ճանչցած է :

Մահկանացուն, փոխանակ հառաչելու և  
հեծելու հողիդ լայնցուր և ամենուն եր-  
ջանկութեանը աշխատէ :

Ձի դու միակ ստեղծչին նման ես :

Դու մինակ քու բանավարութեամբդ ա-  
զատ ես : Դու մինակ իրեն պէս արդարու-  
թիւնը և սէրը կը ճանաչես :

Ինութեան մէջ չը կայ բան մը որ իւր  
ճամբէն կը շեղի :



Բան մը չը կրնար փոխուիլ, բան մը չը կրնար ինքզինքը տեսնել, դատել, ճանչնալ, կայնեցնել, կամ իւր պողոտային մէջ դահավիժել: Բան մը չը կրնար իւր յատուկ զօրութեամբը բարւոքիլ, գեղեցկանալ, մեծնալ, և անմահանալ:

Ո՛չ մէկ գիշեր մը ցերեկունէ վայրկեան մը յափշտակած է:

Ո՛չ մէկ գետ իւր ընթացքին մէջ չ'է կըրցած կասիլ, կ'ուղէ զարդարուած մարդագետիմներու մէջէ անցնի, կ'ուղէ իւր եռացող ալիներն դաշտերը ոռոգեն հունձերը հօտերը վերցնելով:

Երկրին կրակը միայնակ չը խեղդուիր:

Նա բնաւ իւր յատուկ վառման մէջ չը ցոլանար:

Երկաթը ազատ չ'է մագնիսին չը հետեւելու: Անօթի վագրը ինքզինքը իւր որսին վրայ նետելէն ազատ չ'է:

Դ՛ու միայն բանավարութեամբը ինքզինքիդ կը ցոլանաս և զքեզ կը ճանչնաս:

Ազատ ես դու քու բնազդմանդ հետեւելու և կամ զայն կամբովդ խեղդելու:

Քու միտքդ երբ հակեալ լինի, դու կըրնաս գաւազանի մը պէս զայն ծռել հակա-

ռակ կողմին զայն ուղղելու:

Տգեղը դու գեղեցկի կը փոխես. ատելութիւնը սիրոյ կը վերածես ինչպէս զգետս մը կը վերածուի:

Դու կէս գիշերուն ցերեկ կ'ստեղծես:

Չայներու անհամաձայնութենէ մը դու ներդաշնակութիւն կը բղխեցնես և Տիօփէնի պէս գերեաց վաճառատեղին բանավարութեամբ ազատ, թէ և շղթայակապ ըլլայ ձեռներդ կրնաս աղաղակել. Ո՛չ ի՞նչ է Դու:

Դու ինքզինքդ աւելի բարձրացնելու համար կը խոնարհեցնես:

Մահուան ատենն իսկ դու քու անմահականութեանդ անկորնչելի յիշատակարանդ պեղած ես:

Նա միայն թշուառ է, որ բարին չ'է ճանչցած:

Այն միայն՝ որոյ սիրտը սիրով բարախած չ'է, որ իւր բաղդէն կը գանգատի:

Այն՝ որ ո՛չ բարի և ո՛չ արդար եղաւ, թշուառ վիճակ մ'ունի:

Թող ուզածին չափ ողբայ այն՝ որ եղբայրութեան սեղանին վրայ շահ մը չ'է զոհած:



Այն՝ որ իւր կուրծքը իր սրտին համար  
չափազանց նեղ ըլլալը զգացած չ'է, որ եր-  
բէք իւր ճակատովը անհունութեան սահ-  
մանները չ'է բաղխած, թող իւր վիճակին  
վրայ արտասուէ :

Բայց նա ևս նա միակ պիտի արտասուէ :

Վերջապէս այն՝ որ իւր բանավարութեան  
մէջ երբէք տիեզերական լոյսը, աստուածա-  
յին բանավարութիւնը տեսած չ'է, ուրկէ  
ամեն բան կը ծագի և առ որ ամեն բան կը  
վերածի, ազատ չ'է :

Այն, այո՛, նա գերի է :

Գերի իւր վշտին, գերի իւր բաղդին,  
գերի իւր ծննդեան, իւր չարութեան, իւր  
տգիտութեան և իւր ոչնչութեան :

Բայց մեք, եղբարք իմ, բոլորովին ազա-  
տութեամբ, բանավարութեամբ, սիրով է որ  
իրարու ձեռքէ բռնած կուրծ կուրծքի, և  
աչք աչքի դէմ կենաց կամ մահուան խորհրդի  
մը մէջ խառնուելով, ելեքարական նոյն շնչով  
կաղզուրեալ՝ որ կ'ընթանայ և միանգամայն  
մեր հոգիքը կը կապէ, ի պատիւ նոյն ազա-  
տութեան, բանավարութեան, փառաց և ե-  
րախտայնութեան երգելը կը գեղեցիկմք :





23799

12013

F-41



